

**«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ**

**Ֆինանսական հաշվետվությունների միջազգային  
ստանդարտներին համապատասխան`  
Ֆինանսական հաշվետվություններ և  
Անկախ աուդիտորական եզրակացություն**

**31 դեկտեմբերի 2025թ.**

# Բովանդակություն

ԱՆԿԱՆ ԱՌԻԴԻՏՈՐԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն .....	1
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվություն .....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն .....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն .....	4

Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1	Ընդհանուր տեղեկություններ «Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ի և նրա գործունեության մասին .....	5
2	Ընկերության գործառնական միջավայրը .....	5
3	Պատրաստման հիմունքները .....	5
4	Հաշվապահական հաշվառման քաղաքականության էական գնահատականներ և դատողություններ .....	7
5	Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին .....	7
6	Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ .....	8
7	Հիմնական միջոցներ .....	11
8	Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ .....	13
9	Պաշարներ .....	15
10	Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր .....	15
11	Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ .....	16
12	Կանոնադրական կապիտալ .....	17
13	Փոխառություններ .....	17
14	Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն .....	17
15	Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր .....	18
16	Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ .....	19
17	Վաճառքի ինքնարժեք .....	20
18	Վաճառքի և բաշխման ծախսեր .....	20
19	Ընդհանուր և վարչական ծախսեր .....	21
20	Շահութահարկ .....	21
21	Պայմանական դեպքեր և պարտավորություններ .....	23
22	Ֆինանսական ռիսկերի կառավարում .....	24
23	Կապիտալի կառավարում .....	27
24	Ֆինանսական գործիքների իրական արժեքը .....	27
25	Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների .....	28
26	Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ .....	28
27	Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր .....	30



## Անկախ անդիտորական եզրակացություն

«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ Բաժնետիրոջը

### Մեր կարծիքը

Մեր կարծիքով, ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում «Ցեպելին Արմենիա» ՍՊԸ (այսուհետ՝ «Ընկերություն») ֆինանսական վիճակը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև Ընկերության՝ այդ ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքները և դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների:

### Աուդիտի առարկան

Ընկերության ֆինանսական հաշվետվությունները ներառում են.

- ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ,
- այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվությունը,
- այդ ամսաթվին ավարտված տարվա դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունը, և
- ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, որոնք ներառում են էական հաշվապահական հաշվառման քաղականության տեղեկատվություն և այլ բացատրական տեղեկատվություն:

### Կարծիքի հիմքը

Մենք աուդիտն անցկացրել ենք Աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է մեր եզրակացության «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում:

Մենք գտնում ենք, որ մեր կողմից ձեռք բերված աուդիտորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

### Անկախություն

Մենք անկախ ենք Ընկերությունից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված՝ Պրոֆեսիոնալ հաշվապահների վարքագրի (ներառյալ՝ Անկախության միջազգային ստանդարտների) («ՀԷՄՍԻՄ Վարքագիր») սկզբունքների: Մենք կատարել ենք էթիկայի գծով մեր այլ պարտականությունները՝ համաձայն ՀԷՄՍԻՄ Վարքագրի:

## Ղեկավարության և կառավարման օղակներում գտնվող անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման, և այնպիսի ներքին հսկողության համար, որն ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Ընկերության անընդհատ գործելու կարողության գնահատման, համապատասխան դեպքերում՝ անընդհատության հետ կապված հարցերի բացահայտման, և Ընկերության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունների պատրաստման համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Ընկերությունը կամ դադարեցնել գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում գտնվող անձինք պատասխանատու են Ընկերության ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի վերահսկման համար:

## Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար

Մեր նպատակն է՝ ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները, որպես ամբողջություն, զերծ են խարդախության կամ սխալների հետևանքով առաջացող էական խեղաթյուրումներից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորական եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, սակայն այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կբացահայտի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով, և համարվում են էական, երբ ողջամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած, կարող են ազդեցություն ունենալ օգտագործողների՝ այս ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ներին համապատասխան աուդիտի շրջանակներում, մենք աուդիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամտություն: Ի լրումն, մենք.

- Որոշում և գնահատում ենք ֆինանսական հաշվետվություններում խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումների ռիսկը, մշակում և իրականացնում ենք այդ ռիսկերին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր աուդիտորական կարծիքը արտահայտելու համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկն ավելի բարձր է սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումը չհայտնաբերելու ռիսկի համեմատ, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, խեղաթյուրումներ կամ ներքին վերահսկողության շրջանցում:

- Ձեռք ենք բերում պատկերացում աուդիտին վերաբերող ներքին հսկողության մասին՝ տվյալ հանգամանքներին համապատասխան աուդիտորական ընթացակարգեր նախագծելու, այլ ոչ թե Ընկերության ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար:
- Չնայած նաև հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև ղեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և համապատասխան բացահայտումների ողջամտությունը:
- Եզրահանգում ենք ղեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության հիմունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ, և հիմնվելով ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա՝ գնահատում ենք՝ արդյոք առկա է էական անորոշություն ղեկավարի կամ իրավիճակների վերաբերյալ, որոնք կարող են նշանակալի կասկած հարուցել Ընկերության գործունեության անընդհատությունը պահպանելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, մենք պարտավոր ենք մեր աուդիտորական եզրակացությունում ուշադրություն հրավիրել ֆինանսական հաշվետվություններում համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդպիսի բացահայտումները բավարար չեն, ձևափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր եզրակացության ամսաթիվը ձեռք բերված աուդիտորական ապացույցների վրա: Այնուամենայնիվ, ապագա ղեկավարը կամ իրավիճակները կարող են հանգեցնել նրան, որ Ընկերությունը դադարեցնի անընդհատության սկզբունքով գործունեությունը:
- Գնահատում ենք ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքը և բովանդակությունը, այդ թվում՝ բացահայտումները ինչպես նաև ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու ղեկավարի ճշմարիտ ներկայացումը:

Կառավարման օղակներում գտնվող անձանց, ի թիվս այլ հարցերի, հաղորդում ենք աուդիտորական առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև աուդիտի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների վերաբերյալ:

Բնօրինակ հաշվետվությունը ստորագրված է հայերեն լեզվով:

  
  
 Նինո Կարազիշյանի  
 Տնօրեն

Երևան, Հայաստանի Հանրապետություն

19 փետրվար 2026թ.

*PricewaterhouseCoopers Armenia LLC*

**«Յեպելին Արմենիա» ՍՊԸ  
Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն**


Հազ. ՀՀ դրամ	Ծան.	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>			
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	7	1,146,795	1,027,670
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	8	42,104	11,930
Ոչ նյութական ակտիվներ		22,476	17,837
Կանխավճարներ ոչ ընթացիկ ակտիվների գծով		26,868	1,800
Հետաձգված հարկային ակտիվ	20	186,232	220,165
<b>Ընդամենը ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>1,424,475</b>	<b>1,279,402</b>
<b>Ընթացիկ ակտիվներ</b>			
Պաշարներ	9	3,292,346	2,628,545
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	10	1,137,691	1,189,862
Շահութահարկի գծով ընթացիկ կանխավճար		37,793	-
Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ	11	9,637	235,361
<b>Ընդամենը ընթացիկ ակտիվներ</b>		<b>4,477,467</b>	<b>4,053,768</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ԱԿՏԻՎՆԵՐ</b>		<b>5,901,942</b>	<b>5,333,170</b>
<b>ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>			
Կանոնադրական կապիտալ	12	1,525,190	1,525,190
Զբաղիված շահույթ		261,838	487,609
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>		<b>1,787,028</b>	<b>2,012,799</b>
<b>ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>			
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>			
Վարձակալության գծով պարտավորություն	8	35,630	7,547
<b>Ընդամենը ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>35,630</b>	<b>7,547</b>
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>			
Փոխառություններ	13	2,662,994	2,178,994
Վարձակալության գծով պարտավորություն	8	7,286	8,128
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	15	1,409,004	1,121,158
Ընթացիկ հարկային պարտավորություն		-	4,544
<b>Ընդամենը ընթացիկ պարտավորություններ</b>		<b>4,079,284</b>	<b>3,312,824</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ</b>		<b>4,114,914</b>	<b>3,320,371</b>
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ՍԵՓԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼ</b>		<b>5,901,942</b>	<b>5,333,170</b>

Հաստատվել է հրապարակման և ստորագրվել է 2026թ. փետրվարի 19-ին:

Պետար Գեորգիև  
Գլխավոր տնօրեն




Դավիթ Մովսիսյան  
Ֆինանսական տնօրեն



**«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ  
Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին  
հաշվետվություն**

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2025թ.	2024թ.
Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ	16	11,798,279	16,581,831
Վաճառքի ինքնարժեք	17	(9,446,252)	(13,891,748)
<b>Համախառն շահույթ</b>		<b>2,352,027</b>	<b>2,690,083</b>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեզրկման պահուստի գծով ծախս	10	(24,019)	(13,005)
Արժեզրկման հակադարձում շահույթի կամ վնասի միջոցով	7	52,894	-
Վաճառքի և բաշխման ծախսեր	18	(1,031,224)	(1,081,851)
Ընդհանուր և վարչական ծախսեր	19	(600,699)	(587,491)
Այլ օգուտ/(վնաս), զուտ		42,632	49,847
<b>Գործառնական շահույթ</b>		<b>791,611</b>	<b>1,057,583</b>
Ֆինանսական ծախս		(416,066)	(452,054)
<b>Շահույթ նախքան հարկումը</b>		<b>375,545</b>	<b>605,529</b>
Շահութահարկի գծով ծախս	20	(113,707)	(117,920)
<b>ՏԱՐՎԱ ՇԱՀՈՒՅԹ</b>		<b>261,838</b>	<b>487,609</b>
Այլ համապարփակ եկամուտ		-	-
<b>ԸՆԴԱՄԵՆԸ ՏԱՐՎԱ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔ</b>		<b>261,838</b>	<b>487,609</b>

**«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ**  
**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն**

Հազ. ՀՀ դրամ	Ծան .	Կանոնադրական կապիտալ	Զբաղիված շահույթ	Ընդամենը
<b>Մնացորդն առ 1 հունվարի 2024թ.</b>		<b>1,525,190</b>	<b>437,990</b>	<b>1,963,180</b>
Տարվա շահույթ		-	487,609	487,609
<b>Ընդամենը 2024թ. համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>-</b>	<b>487,609</b>	<b>487,609</b>
Հայտարարված շահաբաժիններ	12	-	(437,990)	(437,990)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>		<b>1,525,190</b>	<b>487,609</b>	<b>2,012,799</b>
Տարվա շահույթ		-	261,838	261,838
<b>Ընդամենը 2025թ. համապարփակ ֆինանսական արդյունք</b>		<b>-</b>	<b>261,838</b>	<b>261,838</b>
Հայտարարված շահաբաժիններ	12	-	(487,609)	(487,609)
<b>Մնացորդն առ 31 դեկտեմբերի 2025թ.</b>		<b>1,525,190</b>	<b>261,838</b>	<b>1,787,028</b>

**«Տեպելին Արմենիա» ՍՊԸ**  
**Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն**

Հազ. ՀՀ դրամ	Ծան.	2025թ.	2024թ.
<b>Գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
<b>Ստացված դրամական միջոցներ</b>			
Դրամական միջոցների մուտքեր հաճախորդներից		14,083,960	20,170,861
Դրամական միջոցների մուտքեր այլ դեբիտորներից		47,362	13,288
<b>Վճարված դրամական միջոցներ</b>			
Մատակարարներին վճարված դրամական միջոցներ		(9,510,231)	(12,840,392)
Այլ կրեդիտորներին վճարված դրամական միջոցներ		(123,417)	(61,222)
Կշիսատակիցներին և նրանց անունից վճարված դրամական միջոցներ		(1,624,489)	(1,872,585)
Շահույթահարկից բացի, այլ հարկեր		(2,326,322)	(2,545,145)
<b>Գործառնական գործունեությունից ստացված դրամական միջոցներ</b>		<b>546,863</b>	<b>2,864,805</b>
Վճարված շահույթահարկ			
Վճարված տոկոսներ			
		(122,111)	(115,610)
		(410,538)	(453,520)
<b>Գործառնական գործունեությունից ստացված զուտ դրամական միջոցներ</b>		<b>14,214</b>	<b>2,295,675</b>
<b>Ներդրումային գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
Հիմնական միջոցների ձեռքբերում			
Հիմնական միջոցների վաճառքից մուտքեր			
		(322,824)	(236,301)
		65,586	7,492
<b>Ներդրումային գործունեությամբ օգտագործված զուտ դրամական միջոցներ</b>		<b>(257,238)</b>	<b>(228,809)</b>
<b>Ֆինանսական գործունեությունից դրամական միջոցների հոսքեր</b>			
Փոխառություններից մուտքեր			
Փոխառությունների մարում			
Վճարված շահաբաժիններ, հարկերից զուտ			
12		13,873,696	16,304,661
		(13,386,011)	(18,328,109)
		(463,228)	(416,091)
<b>Ֆինանսական գործունեությամբ ստացված/(օգտագործված) զուտ դրամական միջոցներ</b>		<b>24,457</b>	<b>(2,439,539)</b>
Փոխարժեքի տատանումների ազդեցությունը դրամական միջոցների և դրանց համարժեքների վրա			
		(7,157)	6,708
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեսկզբին</b>		<b>11</b>	<b>235,361</b>
<b>Դրամական միջոցները և դրանց համարժեքները տարեվերջին</b>		<b>11</b>	<b>9,637</b>
		<b>235,361</b>	<b>235,361</b>

## **1 Ընդհանուր տեղեկություններ «Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ի և նրա գործունեության մասին**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ-ի կողմից հրապարակված Ֆինանսական Հաշվետվությունների Միջազգային Ստանդարտների համաձայն, («ՖՀՄՍ հաշվառման ստանդարտներ»), «Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ի (այսուհետ՝ «Ընկերություն») համար:

Ընկերությունը հիմնադրվել է 2005թ. հունիսի 23-ին, և իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում: Ընկերությունը սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն է՝ հիմնադրված Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության անմիջական մայր ընկերությունը «Zeppelin International AG holding»-ն էր, իսկ վերջնական մայր ընկերությունը՝ «Zeppelin GmbH»-ն: Վերջնական վերահսկող կողմ է հանդիսանում Գերմանիայի Բադեն-Վյուրտեմբերգի Ֆրիդրիխսհաֆեն քաղաքը:

**Հիմնական գործունեությունը.** Ընկերության հիմնական բիզնես գործունեությունը շինարարական և գյուղատնտեսական մեքենաների և սարքավորումների, բեռնամբարձիչների, էքսկավատորների, բեռնատարների, գեներատորների, պահեստամասերի արտադրությունն է, և հարակից ծառայությունների մատուցումը: Ընկերության գործունեության իրականացման հիմնական վայրն է Հայաստանի Հանրապետության Աբովյան քաղաքը:

**Իրավաբանական հասցեն և գործունեության վայրը.** Ընկերության իրավաբանական հասցեն է՝ 2 Արտադրական թաղամաս, 4րդ մասնաշենք, Աբովյան, 2202, Հայաստանի Հանրապետություն:

## **2 Ընկերության գործառնական միջավայրը**

**Հայաստանի Հանրապետություն.** Հայաստանի Հանրապետության տնտեսությունը ցուցաբերում է զարգացող շուկաներին բնորոշ որոշակի հատկանիշներ: Իրավական, հարկային և օրենսդրական դաշտը շարունակում է զարգանալ և ենթարկվել հաճախակի փոփոխությունների, ինչպես նաև կարող է ենթակա լինել տարաբնույթ մեկնաբանումների (Ծանոթագրություն 21): Հայաստանի Հանրապետության տնտեսական միջավայրի վրա էական ազդեցություն ունի Ռուսաստանի Դաշնությունում գործարար ակտիվության մակարդակը, և Ռուսաստանի Դաշնությունից դեպի Հայաստանի Հանրապետություն դրամական միջոցների հոսքերը: Հետևաբար, տարածաշրջանում պահպանվող քաղաքական լարվածությունը, միջազգային պատժամիջոցները, արժեթղթերի շուկայի անկայունությունը և Ռուսաստանի Դաշնության առջև ծառայած այլ ռիսկերը կարող են բացասական ազդեցություն ունենալ Հայաստանի Հանրապետության ֆինանսական և կորպորատիվ ոլորտների վրա:

Ներկայիս տնտեսական իրավիճակի երկարաժամկետ ազդեցությունները դժվար է կանխատեսել, և դեկավարության ընթացիկ ակնկալիքներն ու գնահատականները կարող են տարբերվել իրական արդյունքից:

## **3 Պատրաստման հիմունքները**

**Պատրաստման հիմքը.** Սույն ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են ՀՀՄՍԽ կողմից հրապարակված՝ Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների («ՖՀՄՍ») պահանջներին համապատասխան («ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ»), սկզբնական արժեքի հիմունքով, փոփոխված ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչմամբ իրական արժեքով, ինչպես նաև իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով («FVTPL») և իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով («FVOCI») չափվող ֆինանսական գործիքների վերագնահատմամբ: Սույն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման նպատակով կիրառված հաշվապահական հաշվառման քաղաքականության էական սկզբունքները ներկայացված են համապատասխան Ծանոթագրություններում: Այս սկզբունքները հետևողականորեն կիրառվել են բոլոր հաշվետու ժամանակաշրջանների համար, եթե այլ կերպ նշված չէ (տե՛ս Ծանոթագրություն 5):

**3 Պատրաստման հիմունքները (շարունակություն)**

Այս ֆինանսական հաշվետվությունները հասցեագրված են դրանց առաջնային օգտագործողներին, որոնք են՝ ներդրողները, որոնք վարկով տրամադրում կամ հատկացնում են կապիտալ հաշվետու կազմակերպությանը: Այս ֆինանսական հաշվետվություններում ենթադրվել է, որ դրանց առաջնային օգտագործողները տիրապետում են բավարար գիտելիքների բիզնեսի և տնտեսական գործունեության վերաբերյալ և կատարում են տեղեկատվության հանգամանային վերանայում և վերլուծություն: Այնուամենայնիվ լինում են դեպքեր, երբ նույնիսկ իրագել և հանգամանային օգտագործողները կարող են կարիք ունենալ խորհրդատուի օգնության՝ այս ֆինանսական հաշվետվություններում ներկայացված բարդ տնտեսական երևույթների մասին տեղեկատվությունը ըմբռնելու համար:

Այս ֆինանսական հաշվետվությունների նպատակն է՝ բացահայտել միայն այն տեղեկատվությունը, որը ղեկավարությունը համարում է էական առաջնային օգտագործողների համար: Ղեկավարությունը ձգտում է չնվազեցնել այս ֆինանսական հաշվետվությունների հասկանալիությունը՝ էական տեղեկատվությունը ոչ էական տեղեկատվությամբ քողարկելու միջոցով: Հետևաբար, համապատասխան բացահայտումներին վերաբերող ծանոթագրություններում բացահայտվում են միայն հաշվապահական հաշվառման քաղաքականության էական դրույթները, ըստ կիրառելիության:

ՖՀՄՍ-ին համապատասխան ֆինանսական հաշվետվությունների պատրաստման համար պահանջվում են հաշվապահական հաշվառման էական գնահատումներ: Բացի այդ, Ընկերության հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման ժամանակ ղեկավարությանն անհրաժեշտ է առաջնորդվել իր դատողություններով: Այն ոլորտները, որոնք ենթադրում են դատողությունների կամ բարդության ավելի բարձր աստիճան, կամ այն ոլորտները, որտեղ ենթադրություններն ու գնահատականները էական են ֆինանսական հաշվետվությունների համար, բացահայտված են Ծանոթագրություն 4-ում:

**Գործարքներ և մնացորդներ.** Դրամական ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի (այսուհետ՝ «ՀՀ ԿԲ») պաշտոնական փոխարժեքով: Գործարքների վճարումները կատարելու և դրամական ակտիվները և պարտավորությունները ՀՀ ԿԲ տարեվերջի պաշտոնական փոխարժեքով Ընկերության ֆունկցիոնալ արժույթի փոխարկելու արդյունքում ստացված՝ արտարժույթի փոխարկումից եկամուտը կամ վնասը ճանաչվում է շահույթում կամ վնասում, որպես այլ օգուտ/(վնաս), զուտ: Արտարժույթի փոխարկումից օգուտները և վնասները, որոնք վերագրելի են փոխառություններին և դրամական միջոցներին և դրանց համարժեքներին, շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքի մասին հաշվետվությունում ներկայացվում են «ֆինանսական ծախսեր» հոդվածների ներքո: Արտարժույթի փոխարկումից բոլոր այլ օգուտները և վնասները ներկայացվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում «Այլ օգուտներ/(վնասներ), զուտ» տողում: Տարեվերջի փոխարժեքով փոխարկումը չի կիրառվում ոչ դրամական հոդվածների նկատմամբ, որոնք չափվում են սկզբնական արժեքով:

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ արտարժույթով արտահայտված մնացորդների փոխարկման համար օգտագործվող հիմնական փոխարժեքներն են՝ 1 ԱՄՆ դոլար = 381.36 ՀՀ դրամ (2024թ.՝ 1 ԱՄՆ դոլար = 396.56 ՀՀ դրամ), 1 եվրո = 449.01 ՀՀ դրամ (2024թ.՝ 1 եվրո = 413.89 ՀՀ դրամ), 1 ՌԴ ռուբլի = 4.87 դրամ (2024թ. 1 ՌԴ ռուբլի = 3.71 ՀՀ դրամ):

Ընկերության ֆունկցիոնալ արժույթը Ընկերության հիմնական գործունեության իրականացման տնտեսական միջավայրի արժույթն է: Ընկերության ֆունկցիոնալ արժույթը և Ընկերության հաշվետվությունների ներկայացման արժույթը ՀՀ ազգային արժույթն է՝ Հայաստանի Հանրապետության դրամը (ՀՀ դրամ):

**Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների փոփոխություն.** Թողարկումից հետո ֆինանսական հաշվետվությունների ցանկացած փոփոխություն պահանջում է Ընկերության ղեկավարության հաստատումը, ով լիազորել է այդ ֆինանսական հաշվետվությունների թողարկումը:

**4 Հաշվապահական հաշվառման քաղաքականության Էական գնահատականներ և դատողություններ**

Ընկերությունը կատարում է հաշվապահական հաշվառման գնահատականներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված գումարների և հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների վրա: Գնահատումները և դատողությունները շարունակական կերպով վերանայվում են և հիմնված են ղեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ինչպիսիք են հետագա իրադարձությունների ակնկալիքները, որոնք առկա պայմաններում տրամաբանական են համարվում: Գնահատումներից բացի, ղեկավարությունը կատարում է նաև որոշակի այլ դատողություններ հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման գործընթացում: Սասնագիտական դատողությունները, որոնք առավել նշանակալի ազդեցություն ունեն ֆինանսական հաշվետվություններում ճանաչված արժեքների վրա, և գնահատականները, որոնք կարող են հիմք հանդիսանալ հաջորդ ֆինանսական տարվա ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքներում նշանակալի ճշգրտման համար, հետևյալն են.

- |   |                                   |
|---|-----------------------------------|
| - <i>Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը</i>                                     | լրացուցիչ տե՛ս Ծանոթագրություն 7  |
| - <i>Պաշարների հնացում</i>  | լրացուցիչ տե՛ս Ծանոթագրություն 9  |
| - <i>ԱՎԿ գնահատում</i>  | լրացուցիչ տե՛ս Ծանոթագրություն 10 |
| - <i>Հետաձգված հարկային ակտիվի ճանաչում</i>   | լրացուցիչ տե՛ս Ծանոթագրություն 20 |
| - <i>Կապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում</i>                               | լրացուցիչ տե՛ս Ծանոթագրություն 26 |
| - <i>Վարձակալության պարտավորությունների որոշման համար օգտագործվող գեոչային դրույքաչափեր</i> | լրացուցիչ տե՛ս Ծանոթագրություն 8  |
| - <i>Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածություն</i>                                 | լրացուցիչ տե՛ս Ծանոթագրություն 8  |

**5 Անցում նոր կամ վերանայված ստանդարտներին և մեկնաբանություններին**

2025թ. հունվարի 1-ից ուժի մեջ են մտել հետևյալ նոր ստանդարտները և փոփոխությունները.

**Փոփոխություններ ՀՀՄՍ 21-ում «Փոխանակելիության բացակայություն» (թողարկվել է 2023թ. օգոստոսի 15-ին և ուժի մեջ է մտնում 2025թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** 2023թ. օգոստոսին ՀՀՄՍ-ն փոփոխություններ է կատարել ՀՀՄՍ 21-ում, որը նպատակ ունի օգնել կազմակերպություններին գնահատելու երկու արժույթների միջև փոխանակելիությունը և որոշել սփոթ փոխարժեքն այն դեպքում, երբ փոխանակելիությունն առկա չէ: Փոփոխությունները ազդում են կազմակերպության վրա այն ժամանակ, երբ ընկերությունն ունի գործարք կամ գործառնություն արտարժույթով, որը չափման ամսաթվին որոշակի նպատակով չի կարող փոխանակվել այլ արժույթի: ՀՀՄՍ 21-ի փոփոխությունները չեն ներկայացնում սփոթ փոխարժեքը գնահատելու վերաբերյալ մանրամասն պահանջներ: Փոխարենը, սահմանվում է շրջանակ, որի համաձայն կազմակերպությունը կարող է որոշել սփոթ փոխարժեքը գնահատման ամսաթվի դրությամբ: Նոր պահանջները կիրառելիս չի թույլատրվում համեմատական տեղեկատվության վերաներկայացում: Անհրաժեշտ է ազդեցության ենթարկվող գումարները փոխարկել սկզբնական կիրառման ամսաթվի դրությամբ գնահատված սփոթ փոխարժեքներով՝ չբաշխված շահույթի կամ կուտակային փոխարժեքային տարբերությունների պահուստի ճշգրտմամբ:

**6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ**

Հրապարակվել են 2026թ. հունվարի 1-ից կամ դրանից հետո տարեկան ժամանակահատվածների համար պարտադիր մի շարք նոր ստանդարտներ և մեկնաբանություններ, որոնց վաղ կիրառում չի իրականացվել Ընկերության կողմից:

**Ֆինանսական գործիքների դասակարգման և չափման փոփոխություններ . ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ (թողարկվել է 2024թ. մայիսի 30-ին և ուժի մեջ է մտնում 2026թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** 2024թ. մայիսի 30-ին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է ՖՀՄՍ 9-ի և ՖՀՄՍ 7-ի փոփոխություններ՝ հետևյալ նպատակներով.

- (ա) պարզաբանել որոշ ֆինանսական ակտիվների և պարտավորությունների ճանաչման և ապաճանաչման ամսաթիվը, սահմանելով նոր բացառություն էլեկտրոնային դրամական փոխանցումների համակարգի միջոցով մարվող որոշ ֆինանսական պարտավորությունների համար.
- (բ) պարզաբանել և լրացուցիչ ուղեցույց ներկայացնել՝ բացառապես մայր գումարի և տոկոսների վճարման չափանիշին ֆինանսական ակտիվի համապատասխանությունը գնահատելու համար.
- (գ) ավելացնել նոր բացահայտումներ պայմանագրային ժամկետներ ունեցող որոշակի գործիքների գծով, որոնք կարող են առաջացնել դրամական միջոցների հոսքերի փոփոխություն (օրինակ՝ բնապահպանական, սոցիալական և կառավարման (ԲՄԿ) նպատակների իրագործմանը կապակցված որոշ գործիքներ). և
- (դ) թարմացնել իրական արժեքով այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով (FVOCI) չափվող բաժնային գործիքների բացահայտումները:

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**ՖՀՄՍ 18 «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» (թողարկվել է 2024թ. ապրիլի 9-ին և ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** 2024թ. ապրիլին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է նոր ստանդարտ՝ ՖՀՄՍ 18 «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում», որը առանձնահատուկ անդրադառնում է շահույթի կամ վնասի մասին հաշվետվություններին առնչվող թարմացումներին: ՖՀՄՍ 18-ում ներկայացված առանցքային նոր հասկացությունները առնչվում են հետևյալին՝

- շահույթի կամ վնասի հաշվետվության կառուցվածքը.
- ֆինանսական հաշվետվություններում պահանջվող բացահայտումները շահույթի կամ վնասի չափման որոշակի դիրքերի գծով, որոնք ներկայացվում են կազմակերպության ֆինանսական հաշվետվություններից դուրս (այսինքն՝ ղեկավարության կողմից սահմանված չափման դիրքերը). և
- համախմբման և տարանջատման ընդլայնված սկզբունքները, որոնք կիրառելի են հիմնական ֆինանսական հաշվետվությունների, և ընդհանուր առմամբ ծանոթագրությունների նկատմամբ:

ՖՀՄՍ 18-ը կփոխարինի ՀՀՄՍ 1-ին. ՀՀՄՍ 1-ում ներառված սկզբունքներից շատերը պահպանվում են՝ սահմանափակ փոփոխություններով:

ՖՀՄՍ 18-ը չի ազդի ֆինանսական հաշվետվությունների հոդվածների ճանաչման կամ չափման վրա, սակայն կարող են փոփոխվել կազմակերպության կողմից որպես «գործառնական շահույթ կամ վնաս» ներկայացվող դիրքերը: ՖՀՄՍ 18-ը կկիրառվի 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող հաշվետու ժամանակաշրջանների համար: Այն կիրառելի է նաև համեմատական տեղեկատվության նկատմամբ: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**ՖՀՄՍ 19. Հրապարակային հաշվետվողականության պահանջ չունեցող դուստր ձեռնարկություններ. Բացահայտումներ (թողարկվել է 2024թ. մայիսի 9-ին, այնուհետև փոփոխվել է 2025թ. օգոստոսի 21-ին և ուժի մեջ է 2027թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է նոր ՖՀՄՍ հաշվառման ստանդարտ դուստր ձեռնարկությունների համար: ՖՀՄՍ 19-ը իրավասու դուստր ձեռնարկություններին հնարավորություն է տալիս ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները կիրառել կրճատված բացահայտումներով: ՖՀՄՍ 19-ի կիրառումը թույլ կտա նվազեցնել դուստր ձեռնարկությունների ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ծախսերը՝ միաժամանակ ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների համար պահպանելով տեղեկատվության օգտակարությունը:

**6 Լոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

Իրենց առանձնացված ֆինանսական հաշվետվությունների համար ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտներ օգտագործող դուստր կազմակերպությունները ներկայացնում են բացահայտումներ, որոնք կարող են անհամաչափ լինել օգտագործողների տեղեկատվական կարիքներին: ՖՀՄՍ 19-ը նպատակ ունի հասցեագրել այս մարտահրավերները՝

- հնարավորություն տալով դուստր ձեռնարկություններին վարել հաշվապահական հաշվառման միայն մեկ լրակազմ, որը բավարար է ինչպես մայր ընկերության, այնպես էլ իրենց սեփական ֆինանսական հաշվետվությունների օգտագործողների կարիքների տեսանկյունից.
- Բացահայտման պահանջների կրճատում. ՖՀՄՍ 19-ը հնարավորություն է տալիս ներկայացնել կրճատված բացահայտումներ, որոնք ավելի պատշաճ կերպով են համապատասխանում ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների կարիքներին:

2025թ. օգոստոսին ՀՀՄՍԽ-ն հրապարակել է «Դուստր ձեռնարկություններ առանց հանրային հաշվետվողականության. բացահայտումներ» ՖՀՄՍ 19 ստանդարտի փոփոխությունները, որոնք օգնում են իրավասու դուստր ձեռնարկություններին՝ նվազեցնել բացահայտման պահանջները 2021թ. փետրվարից մինչև 2024թ. մայիս ամիսը թողարկված ստանդարտների և փոփոխությունների գծով, մասնավորապես՝ «Ներկայացում և բացահայտում ֆինանսական հաշվետվություններում» ՖՀՄՍ 18 ստանդարտի, «Մատակարարների հետ ֆինանսական պայմանավորվածություններ» (ՀՀՄՍ 7 ստանդարտի և ՖՀՄՍ 7 ստանդարտի փոփոխություններ), «Միջազգային հարկային բարեփոխումներ՝ երկրորդփուլի մոդելային կանոններ» (ՀՀՄՍ 12 ստանդարտի փոփոխություններ), «Փոխարինելիության բացակայություն» (ՖՀՄՍ 21 ստանդարտի փոփոխություններ) և «Ֆինանսական գործիքների դասակարգումը և չափումը» փոփոխություններ (ՖՀՄՍ 9 ստանդարտի և ՖՀՄՍ 7 ստանդարտի փոփոխություններ):

Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**ՖՀՄՍ 14 «Կարգավորող հետաձգված հաշիվներ» (թողարկվել է 2014թ. հունվարի 30-ին և ուժի մեջ է 2016թ. հունվարի 1-ին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտները առաջին անգամ կիրառող կազմակերպություններին ՖՀՄՍ 14-ը հնարավորություն է ընձեռում շարունակել դրույքաչափերի կարգավորման հետ կապված գումարների ճանաչումը իրենց նախորդ հաշվապահական հաշվառման ստանդարտի պահանջների համաձայն: Այնուամենայնիվ, ՖՀՄՍ Հաշվապահական հաշվառման ստանդարտներն արդեն կիրառող և այդ գումարները չճանաչող կազմակերպությունների հետ համադրելիությունը մեծացնելու նպատակով, ստանդարտը պահանջում է դրույքաչափերի կարգավորման ազդեցությունը ներկայացնել այլ հոդվածներից առանձին: Այն կազմակերպությունը, որն իր ֆինանսական հաշվետվությունները արդեն ներկայացնում է ՖՀՄՍ հաշվապահական հաշվառման ստանդարտների համաձայն, իրավասու չէ կիրառել ստանդարտը: Այս ստանդարտի ուժի մեջ մտնելու ամսաթիվը դեռ պետք է որոշվի ՀՀՄՍԽ-ի կողմից: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**«Ակտիվների վաճառք կամ հատկացում ներդրողի և ասոցիացված կազմակերպությունների կամ համատեղ ձեռնարկումների միջև» - փոփոխություններ ՖՀՄՍ 10-ում և ՀՀՄՍ 28-ում (թողարկված են 2014թ. սեպտեմբերի 11-ին, և ուժի մեջ են մտնում ՀՀՄՍԽ-ի կողմից որոշվելիք ամսաթվին կամ դրանից հետո սկսվող տարեկան ժամանակաշրջանների համար):** Այս փոփոխությունները վերաբերում են ներդրողի և իր ասոցիացված կազմակերպության կամ համատեղ ձեռնարկումների միջև ակտիվների վաճառքին կամ հատկացմանը վերաբերող՝ ՖՀՄՍ 10-ի և ՀՀՄՍ 28-ի պահանջների միջև գոյություն ունեցող անհամապատասխանությանը: Փոփոխությունների կիրառման հիմնական հետևանքն այն է, որ շահույթը կամ վնասը ճանաչվում է ամբողջությամբ այն դեպքում, երբ գործարքը առնչվում է ձեռնարկատիրական գործունեությանը: Շահույթը կամ վնասը ճանաչվում է մասնակիորեն այն դեպքում, երբ ակտիվը չի առնչվում ձեռնարկատիրական գործունեությանը, նույնիսկ եթե այդ ակտիվները պատկանում են դուստր կազմակերպությանը: 2015թ. ՀՀՄՍԽ-ն որոշել է անորոշ ժամանակով հետաձգել այս փոփոխությունների ուժի մեջ մտնելու ամսաթիվը: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**6 Նոր ստանդարտներ և մեկնաբանություններ (շարունակություն)**

**Բնությունից կախված էլեկտրաէներգիային հղում կատարող պայմանագրեր. Փոփոխություններ ՖՅՄՍ 9-ում և ՖՅՄՍ 7-ում (թողարկվել է 2024թ. դեկտեմբերի 18-ին և ուժի մեջ է մտել 2026թ. հունվարի 1-ից):** ՀՀՄՍԻ կողմից հրապարակվել են մի շարք փոփոխություններ, որոնց նպատակն է՝ օժանդակել ընկերություններին բարելավել բնությունից կախված էլեկտրաէներգիայի պայմանագրերի ֆինանսական հետևանքների գծով իրենց հաշվետվողականությունը, հաշվի առնելով, որ այդ պայմանագրերը որպես կանոն կառավարված են որպես էլեկտրաէներգիայի գնման պայմանագրեր (ԷԳՊ): Ընթացիկ հաշվապահական հաշվառման պահանջները կարող են բավարար չափով չարտացոլել ընկերության գործունեության վրա այս պայմանագրերի ազդեցության եղանակը: Որպեսզի ընկերությունները հնարավորություն ունենան այս պայմանագրերն ավելի պատշաճ կերպով արտացոլել ֆինանսական հաշվետվություններում, ՀՀՄՍԻ-ն թիրախային փոփոխություններ է կատարել ՖՅՄՍ 9՝ «Ֆինանսական գործիքներ», և ՖՅՄՍ 7՝ «Ֆինանսական գործիքներ. բացահայտումներ» ստանդարտներում: Փոփոխությունները ներառում են՝ (ա) «սեփական օգտագործման» պահանջների կիրառման պարզաբանում, (բ) որոշակի հեջային հաշվառման պահանջների մեղմացում այն դեպքերում, երբ տվյալ պայմանագրերն օգտագործվում են որպես հեջավորման գործիքներ, և (գ) նոր բացահայտման պահանջների ավելացում, որոնց նպատակն է՝ ներդրողներին հնարավորություն տալ ընկալել այս պայմանագրերի ազդեցությունը ընկերության ֆինանսական ցուցանիշների և դրամական միջոցների հոսքերի վրա: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**ՖՅՄՍ հաշվառման ստանդարտների տարեկան բարելավումներ (թողարկվել է 2024թ. հուլիսին և ուժի մեջ է մտել 2026թ. հունվարի 1-ից):** ՖՅՄՍ 1-ով պարզաբանվել է, որ ՖՅՄՍ հաշվառման ստանդարտներին անցնելուց հետո հեջը պետք է դադարեցվի, եթե այն չի համապատասխանում «որակավորման չափանիշներին», այլ ոչ թե հեջի հաշվառման «պայմաններին»: Սա նպատակ ունի լուծել ՖՅՄՍ 1-ի և ՖՅՄՍ 9-ի հեջի հաշվառման պահանջների միջև անհամապատասխանության հետևանքով առաջացող հնարավոր տարընթեցումը: ՖՅՄՍ 7-ով պահանջվում են օգուտի կամ վնասի բացահայտումներ՝ կապված այն ֆինանսական ակտիվների ապաճանաչման հետ, որտեղ կազմակերպությունը ունի ընթացիկ մասնակցություն, այդ թվում, պահանջվում է բացահայտել՝ արդյոք իրական արժեքի չափումները ներառում են «նշանակալի ծավալով ոչ դիտարկելի մուտքային տվյալներ»: Այս նոր ձևակերպումը փոխարինում է «նշանակալի մուտքային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա» արտահայտությամբ: Փոփոխության նպատակն է՝ ձևակերպումը համապատասխանեցնել ՖՅՄՍ 13-ին: Բացի այդ, պարզաբանվել են ՖՅՄՍ 7-ի կիրառման ուղեցույցի որոշ օրինակներ և ավելացվել է տեքստ առ այն, որ օրինակները հնարավոր է՝ չարտացոլեն ՖՅՄՍ 7-ի նշված պարբերությունների բոլոր պահանջները: ՖՅՄՍ 16-ում կատարվել է փոփոխությունը մարվել է համաձայն ՖՅՄՍ 9-ի, ապա վարձակալը պետք է կիրառի ՖՅՄՍ 9-ի ուղեցույցը՝ արդյունքում առաջացող շահույթը կամ վնասը ճանաչելու համար: Այս պարզաբանումը վերաբերում է վարձակալության գծով պարտավորություններին, որոնք մարվել են կազմակերպության կողմից այդ փոփոխությունը առաջին անգամ կիրառելու հաշվետու տարեկան ժամանակաշրջանի սկզբում կամ դրանից հետո: ՖՅՄՍ 9-ի և ՖՅՄՍ 15-ի միջև անհամապատասխանությունը վերացնելու նպատակով այժմ պահանջվում է, որ առևտրային դեբիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվեն «ՖՅՄՍ 15-ի կիրառման միջոցով որոշված գումարով» այլ ոչ թե «գործարքի գնով» (ինչպես սահմանված է ՖՅՄՍ 15-ում): ՖՅՄՍ 10-ի փոփոխությամբ օգտագործելով պակաս միանշանակ ձևակերպում «դե-ֆակտո գործակալ» հանդիսացող կազմակերպության համար, և պարզաբանվել է, որ ՖՅՄՍ 10-ի Բ74 պարագրաֆում նկարագրված հարաբերությունը միայն մեկ օրինակ է այն հանգամանքներից, որոնց դեպքում պահանջվում է դատողություն՝ որոշելու, թե արդյոք կողմը հանդես է գալիս որպես դե ֆակտո գործակալ: ՀՀՄՍ 7-ում կատարվել է ճշտում հեռացվել են «ինքնարժեքի մեթոդի» վկայակոչումները, որը հանվել է ՖՅՄՍ հաշվառման ստանդարտներից 2008թ. մայիսին, երբ ՀՀՄՍԻ-ն հրապարակեց «Ներդրման արժեքը դուևոր ձեռնարկությունում, համատեղ վերահսկվող կազմակերպությունում կամ ասոցիացված կազմակերպությունում»: Ընկերությունը ներկայումս գնահատում է այս փոփոխությունների ազդեցությունն իր ֆինանսական հաշվետվությունների վրա:

**7 Հիմնական միջոցներ**

Հիմնական միջոցները ներկայացվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեզրկման պահուստը, եթե վերջինս պահանջվում է:

Հետագա ծախսերը համապատասխանաբար ընդգրկվում են ակտիվի հաշվեկշռային արժեքում կամ ճանաչվում են որպես առանձին ակտիվ, միայն այն ժամանակ, երբ հավանական է, որ հիմնական միջոցների համապատասխան միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները կհոսեն դեպի ընկերություն և վերջինիս արժեքը կարող է արժանահավատորեն չափվել: Վերանորոգման և պահպանման գծով ընթացիկ ծախսումները ծախսագրվում են, երբ դրանք տեղի են ունենում: Հիմնական միջոցների միավորների խոշոր հիմնամասերի կամ բաղադրիչների փոխարինման ծախսումները կապիտալացվում են, իսկ փոխարինված մասը դուրս է գրվում:

Յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում ղեկավարությունը գնահատում է, թե արդյոք առկա է հիմնական միջոցների արժեզրկման հատկանիշ: Եթե որևէ նման հատկանիշ գոյություն ունի, ղեկավարությունը գնահատում է փոխհատուցվող գումարը, որը որոշվում է որպես հետևյալ երկու արժեքներից առավելագույնը. օգտագործման արժեք և իրական արժեք՝ հանած վաճառքի ծախսերը: Հաշվեկշռային արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը, և արժեզրկումից կորուստը ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում: Նախորդ հաշվետու ժամանակաշրջաններում ակտիվի համար ճանաչված արժեզրկումից կորուստը հակադարձվում է (անհրաժեշտության դեպքում), եթե տեղի են ունեցել գնահատումներում փոփոխություններ, որոնք կիրառվել են՝ որոշելու համար ակտիվի օգտագործման արժեքը կամ իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը:

Հիմնական միջոցների օտարումից շահույթը կամ վնասը որոշվում է որպես դրանց իրացումից ստացված հասույթի և հաշվեկշռային արժեքի տարբերություն և ճանաչվում է տարվա շահույթում կամ վնասում «կյլ օգուտներ/(վնասներ)» հոդվածի կազմում:

**Մաշվածություն** Հիմնական միջոցների միավորների մաշվածությունը հաշվարկվում է գծային մեթոդի կիրառմամբ՝ բաշխելով դրանց սկզբնական արժեքը մինչև մնացորդային արժեքը՝ օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում:

**Օգտակար ծառայության ժամկետ՝ արտահայտված տարիներով**

Շենքեր	10-40
Հիմնական միջոցներ	2-25
Տրանսպորտային միջոցներ	2-6
Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր	Օգտակար ծառայության ժամկետի և հիմքում ընկած ակտիվի վարձակալության ժամկետի նվազագույնը

**Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետը.** Հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետի գնահատումը կատարվում է՝ ելնելով մասնագիտական դատողությունից, հիմք ընդունելով համանման ակտիվների գծով առկա փորձը: Այս ակտիվներում մարմնավորվող ապագա տնտեսական օգուտները հիմնականում կստացվեն դրանց օգտագործումից: Սակայն մի շարք այլ գործոններ, ինչպիսիք են՝ տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, հաճախ հանգեցնում են տվյալ ակտիվների հետ կապված տնտեսական շահույթի նվազմանը: Ղեկավարությունը գնահատում է հիմնական միջոցների օգտակար ծառայության մնացորդային ժամկետը՝ հիմք ընդունելով ակտիվների տեխնիկական վիճակը, և հաշվի առնելով հաշվարկային ժամանակահատվածը, որի ընթացքում տվյալ ակտիվները ընկերության համար կառաջացնեն տնտեսական շահույթ: Հաշվի են առնվում հետևյալ հիմնական գործոնները. ա) ակտիվների ակնկալվող օգտագործման ժամկետը, բ) սարքավորումների ակնկալվող մաշվածությունը, որը կախված է շահագործման բնութագրերից և տեխնիկական սպասարկման ծրագրից, և գ) տեխնիկական կամ առևտրային տեսանկյունից մաշվածությունը, որն առաջանում է շուկայի պայմանների փոփոխության հետևանքով:

Եթե ակտիվների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ղեկավարության կողմից գնահատված ժամկետներից տարբերվեն 10%-ով, մաշվածության գծով ծախսը կաճեր/կնվազեր 23,037 հազ. ՀՀ դրամով 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար (2024թ. կաճեր/կնվազեր 22,016 հազ. ՀՀ դրամով):

Վարձակալված գույքի վրա կատարված կապիտալ ծախսեր են համարվում վարձակալված ակտիվների բարելավման համար կատարված կապիտալ ծախսերը: Դրանց մաշվածությունը հաշվարկվում է հետևյալ մեծություններից նվազագույնով՝ օգտակար ծառայության ժամկետ կամ վարձակալության ժամկետ:

**«Ցեպեյին Արմենիա» ՍՊԸ**

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2025թ.**

**7 Հիմնական միջոցներ (շարունակություն)**

Հիմնական միջոցների հաշվեկշռային արժեքի փոփոխությունները ներկայացված են ստորև.

Հազ. ՀՀ դրամ	Հող և շենքեր	Հիմնա- կան միջոցներ	Տրանս- պոր- տային միջոցներ	Վարձա- կալված գույքի բարելա- վումներ	Վարձա- կալությա ն համար պահվող ակտիվ- ներ	Անավարտ շինարա- րություն	Ընդամենը
Սկզբնական արժեքն առ 1 հունվարի 2024թ.	680,580	1,816,759	961,336	44,126	10,200	120,002	3,633,003
Կուտակված մաշվածություն	(280,064)	(1,551,085)	(663,407)	(13,104)	(9,055)	-	(2,516,715)
Կուտակված արժեզրկում	-	-	-	-	-	(52,894)	(52,894)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2024թ.</b>	<b>400,516</b>	<b>265,674</b>	<b>297,929</b>	<b>31,022</b>	<b>1,145</b>	<b>67,108</b>	<b>1,063,393</b>
Ավելացումներ	-	90,678	93,788	-	-	-	184,466
Օտարումներ	-	(31)	-	-	-	-	(31)
Մաշվածության գծով ծախս	(24,724)	(90,451)	(97,627)	(6,773)	(584)	-	(220,158)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>375,792</b>	<b>265,870</b>	<b>294,090</b>	<b>24,249</b>	<b>561</b>	<b>67,108</b>	<b>1,027,670</b>
Սկզբնական արժեքն առ 31 դեկտեմբերի 2024թ.	680,580	1,874,842	1,055,124	44,126	10,200	120,002	3,784,874
Կուտակված մաշվածություն	(304,788)	(1,608,972)	(761,034)	(19,877)	(9,639)	-	(2,704,310)
Կուտակված արժեզրկում	-	-	-	-	-	(52,894)	(52,894)
<b>Հաշվեկշռային արժեքը առ 31 դեկտեմբերի 2024թ.</b>	<b>375,792</b>	<b>265,870</b>	<b>294,090</b>	<b>24,249</b>	<b>561</b>	<b>67,108</b>	<b>1,027,670</b>
Սկզբնական արժեքն առ 1 հունվարի 2025թ.	680,580	1,874,842	1,055,124	44,126	10,200	120,002	3,784,874
Կուտակված մաշվածություն	(304,788)	(1,608,972)	(761,034)	(19,877)	(9,639)	-	(2,704,310)
Կուտակված արժեզրկում	-	-	-	-	-	(52,894)	(52,894)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի, 2025թ.</b>	<b>375,792</b>	<b>265,870</b>	<b>294,090</b>	<b>24,249</b>	<b>561</b>	<b>67,108</b>	<b>1,027,670</b>
Ավելացումներ	-	127,180	128,179	-	-	47,803	303,162
Օտարումներ	-	(1,212)	(4,967)	-	(381)	-	(6,560)
Մաշվածության գծով ծախս	(24,768)	(100,354)	(98,296)	(6,773)	(180)	-	(230,371)
Փոխանցում	161,333	6,472	-	-	-	(167,805)	-
Արժեզրկման հակադարձում շահույթի կամ վնասի միջոցով	-	-	-	-	-	52,894	52,894
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2025թ.</b>	<b>512,357</b>	<b>297,956</b>	<b>319,006</b>	<b>17,476</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>1,146,795</b>
Սկզբնական արժեքն առ 31 դեկտեմբերի 2025թ.	841,913	1,923,844	1,098,956	44,126	7,282	-	3,916,121
Կուտակված մաշվածություն	(329,556)	(1,625,888)	(779,950)	(26,650)	(7,282)	-	(2,769,326)
Կուտակված արժեզրկում	-	-	-	-	-	-	-
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2025թ.</b>	<b>512,357</b>	<b>297,956</b>	<b>319,006</b>	<b>17,476</b>	<b>-</b>	<b>-</b>	<b>1,146,795</b>

## **7 Հիմնական միջոցներ (շարունակություն)**

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա 240,560 հազ. ՀՀ դրամ ընդհանուր մաշվածության գծով ծախսից (2024թ.՝ 220,158 հազ. ՀՀ դրամ) 96,064 հազ. ՀՀ դրամ վերագրվում է վաճառքի ինքնարժեքին (2024թ.՝ 92,500 հազ. ՀՀ դրամ), տես Ծանոթագրություն 17, 95,473 ՀՀ դրամ՝ վերագրվում է իրացման և բաշխման ծախսերին (2024թ.՝ 75,091 հազ. ՀՀ դրամ), տես Ծանոթագրություն 18, և 49,023 հազ. ՀՀ դրամ՝ ընդհանուր և վարչական ծախսերին (2024թ.՝ 52,567 հազ. ՀՀ դրամ), տես Ծանոթագրություն 19:

## **8 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ**

**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ.** Ընկերությունը վարձակալում է տարբեր տարածքներ և տրանսպորտային միջոցներ:

Վարձակալության պայմանագրերից բխող ակտիվները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով, որը ներառում է.

- վարձակալության գծով պարտավորության սկզբնական չափման գումարը,
- վարձակալության վճարումները, որոնք կատարվել են վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ մինչ այդ ամսաթիվը, հանած ստացված վարձակալության խրախուսումները,
- ցանկացած սկզբնական ուղղակի ծախսումները,
- վարձակալության պայմանագրով ակտիվի նախատեսված վիճակը վերականգնելու համար պահանջվող ծախսումները:

Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների մաշվածությունը հաշվարկվում գծային հիմունքով, հետևյալ ժամանակահատվածներից նվազագույնով՝ ակտիվի օգտակար ծառայության ժամկետ և վարձակալության ժամկետ:

**Վարձակալության գծով պարտավորություններ.** Վարձակալության պայմանագրերից բխող պարտավորությունները սկզբնական ճանաչման պահին չափվում են ներկա արժեքով: Վարձակալության գծով պարտավորությունները ներառում են հետևյալ վարձակալության վճարների գուտ ներկա արժեքը.

- հաստատուն վճարներ (ներառյալ, ըստ եռության, հաստատուն վճարումները) հանած ստացման ենթակա վարձակալության խրախուսումները,
- փոփոխական վարձակալական վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույքաչափից և սկզբնապես չափվում են օգտագործելով մեկնարկի ամսաթվի դրույթամբ գործող ինդեքսը կամ դրույքաչափը,
- Ընկերության կողմից վճարման ենթակա գումարներ մնացորդային արժեքի երաշխիքների ներքո,
- գնման օպցիոնի իրացման գինը, եթե Ընկերությունը բավականաչափ վստահ է, որ կիրականացնի այդ օպցիոնը, և
- վարձակալության պայմանագրերը դադարեցնելու համար տուգանքների վճարները, եթե վարձակալության ժամկետը արտացոլում է Ընկերության կողմից այդ օպցիոնի իրագործումը:

Վարձակալության վճարները գեղջվում են՝ օգտագործելով վարձակալության պայմանագրով ենթադրվող տոկոսադրույքը:

Վարձակալության վճարները բաժանվում են պարտավորությունների հիմնական գումարի և ֆինանսական ծախսերի: Ֆինանսական ծախսերը ճանաչվում են շահույթում կամ վնասում վարձակալության ամբողջ ժամանակահատվածի ընթացքում՝ յուրաքանչյուր ժամանակաշրջանի պարտավորության մնացորդի վրա հաստատուն պարբերական տոկոսադրույքն ապահովելու համար:

**Վարձակալության պարտավորությունների որոշման համար օգտագործվող գեղջի դրույքաչափեր.** Ընկերությունը գեղջման տոկոսադրույքը հաշվարկելու համար որպես հիմք է օգտագործում իր փոխառության աճող տոկոսադրույքը, քանի որ վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույքը չի կարող անմիջականորեն որոշվել:

**8 Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ և վարձակալության գծով պարտավորություններ (շարունակություն)**

Ընկերությունը վարձակալում է տարածք և տրանսպորտային միջոցներ: Վարձակալության պայմանագրերը սովորաբար կնքվում են 3.5-ից մինչև 5 տարի ժամկետով:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>Փոխադրամիջոցներ</b>	<b>Այլ</b>	<b>Ընդամենը</b>
<b>Հաշվեկշռային արժեքն առ 1 հունվարի 2024թ.</b>	-	<b>20,878</b>	<b>20,878</b>
Ավելացումներ	-	-	-
Օտարումներ	-	-	-
Մաշվածության գծով ծախս	-	(8,948)	<b>(8,948)</b>
<b>Հաշվեկշռային արժեքը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ</b>	-	<b>11,930</b>	<b>11,930</b>
Ավելացումներ	56,942	-	56,942
Այլ	(9,043)	-	(9,043)
Օտարումներ	(7,536)	-	(7,536)
Մաշվածության գծով ծախս	(1,241)	(8,948)	(10,189)
<b>Հաշվեկշռային արժեքն առ 31 դեկտեմբերի 2025թ.</b>	<b>39,122</b>	<b>2,982</b>	<b>42,104</b>

Ընկերությունը վարձակալության պարտավորությունները ճանաչել է հետևյալ կերպ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>31 դեկտեմբերի 2025թ.</b>	<b>31 դեկտեմբերի 2024թ.</b>
Վարձակալության գծով կարճաժամկետ պարտավորություններ	7,286	8,128
Վարձակալության գծով երկարաժամկետ պարտավորություններ	35,630	7,547
<b>Ընդամենը վարձակալության գծով պարտավորություններ</b>	<b>42,916</b>	<b>15,675</b>

2025թ. ֆինանսական ծախսերում ներառված տոկոսային ծախսերը կազմել են 1,746 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 7,547 հազ. ՀՀ դրամ): Տրանսպորտային միջոցների վարձակալության պայմանագրերը ունեն 3-4 տարի մարման ժամկետ, տարեկան 13% տոկոսադրույքով, որից 10%-ը սուբսիդավորվում է կառավարության կողմից՝ Արդյունավետության բարձրացման միջոցառումների ծրագրի շրջանակներում: Սկզբնական ճանաչման պահին ընկերությունը վարձակալության գծով պարտավորությունները չափել է պայմանագրային վարձակալության ապագա վճարումների ներկա արժեքով, որը գեղչվել է վարձակալության մեկնարկի օրվա դրությամբ գործող շուկայական տոկոսադրույքով: Վարձակալության գծով պարտավորությունների իրական արժեքը արտացոլում է այդ ապագա դրամական հոսքերի գեղչված գումարը: Պետական դրամաշնորհը հաշվարկվում է որպես վերջինիս և վարձակալության վճարների ներկա արժեքի միջև տարբերություն, որոնք գեղչվում են վարձակալության սուբսիդավորված մասը հաշվի առնող տոկոսադրույքով և ճանաչվում են որպես օգտագործման իրավունքի ձևով ակտիվների նվազեցում:

**9 Պաշարներ**

Պաշարները չափվում են ինքնարժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Պաշարների ինքնարժեքը որոշվում է «առաջինը մուտք, առաջինը ելք» սկզբունքով: Իրացման զուտ արժեքը սովորական գործունեության ընթացքում վաճառքի ենթադրվող գինն է՝ հանած համալրման և վաճառքը կազմակերպելու համար անհրաժեշտ ծախսումները:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Պահեստամասեր	2,196,149	1,623,166
Վերավաճառքի ենթակա ապրանքներ	980,363	854,603
Անավարտ արտադրություն	99,117	138,268
Նյութեր	16,717	12,508
<b>Ընդամենը պաշարներ</b>	<b>3,292,346</b>	<b>2,628,545</b>

Պաշարները ներկայացված են առանց պահուստի: Պահեստամասերի գծով պահուստը կազմում է 374,042 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 319,135 հազար ՀՀ դրամ), իսկ վերավաճառքի համար նախատեսված ապրանքների գծով՝ 197,753 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 221,088 հազ. ՀՀ դրամ):

Վաճառքի ինքնարժեքը ներկայացնող ժամանակաշրջանում որպես ծախս ճանաչված պաշարների արժեքը կազմել է 8,082,231 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 12,710,267 հազ. ՀՀ դրամ), տես Ծանոթագրություն 17:

**Պաշարների հնացում.** Կախված պաշարների հնությունից և կատեգորիայից Ընկերությունը ճանաչում է պահուստ դանդաղ իրացվելի պաշարների համար՝ պաշարների արժեքի 10%-ից մինչև 100%-ի սահմաններում:

**10 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր**

Առևտրային և այլ դեբիտորական պարտքերը հաշվառվում են ամորտիզացված արժեքով: Կանխավճարները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած արժեզրկման գծով պահուստը:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Առևտրային դեբիտորական պարտքեր	1,190,345	1,195,836
Վարկային կորստի գծով պահուստ	(100,805)	(76,786)
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ առևտրային և այլ դեբիտորական պարտքերի կազմում</b>	<b>1,089,540</b>	<b>1,119,050</b>
Կանխավճարներ ՀՀ մաքսային ծառայությանը	11,770	37,120
Կանխավճարներ մատակարարներին	1,912	4,006
Այլ դեբիտորական պարտքեր	34,469	29,686
<b>Ընդամենը առևտրային և այլ դեբիտորական պարտքեր</b>	<b>1,137,691</b>	<b>1,189,862</b>

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ 107,458 հազ. ՀՀ դրամի առևտրային դեբիտորական պարտքը (2024թ. դեկտեմբերի 31՝ 148,861 հազ. ՀՀ դրամ) արտահայտված է ԱՄՆ դոլարով, եվրոյով արտահայտված առևտրային դեբիտորական պարտք առկա չէ (2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ առկա չէ):

**Ակնկալվող պարտքային կորուստներ.** Ակնկալվող պարտքային կորուստների գնահատման համար Ընկերությունն օգտագործում է ՖՀՄՍ 9-ով նախատեսված պարզեցված մոտեցումը, համաձայն որի օգտագործվում է բոլոր առևտրային և այլ դեբիտորական պարտքերի գծով ակնկալվող պարտքային կորուստների համար գնահատված պահուստը ամբողջ ժամկետի համար:

Ակնկալվող պարտքային կորուստների չափման համար առևտրային դեբիտորական պարտքերը խմբավորվել են՝ ելնելով ընդհանուր պարտքային ռիսկի բնութագրերից և ժամկետանց օրերի քանակից:

**10 Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (շարունակություն)**

Առևտրային դեբիտորական պարտքերի համար պարտքային կորստի պահուստը որոշվում է ստորև բերված աղյուսակում ներկայացված պահուստի ժամկետայնության հաշվարկի միջոցով: Պահուստի ժամկետայնության հաշվարկը հիմնված է ակտիվի ժամկետանց օրերի քանակի վրա՝ ճշգրտված ՀՆԱ-ի աճով և գործազրկության մակարդակի փոփոխությամբ:

Համախառն գումարի նկատմամբ %-ային արտահայտությամբ (Հազ. ՀՀ դրամ)	2025թ.				2024թ.			
	Վնասի դրույք աչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ ողջ ժամկետի համար	Չուտ հաշվեկշռային արժեք	Վնասի դրույք աչափ	Համախառն հաշվեկշռային արժեք	ԱՊԿ ողջ ժամկետի համար	Չուտ հաշվեկշռային արժեք
<b>Առևտրային դեբիտորական պարտքեր</b>								
- ընթացիկ	2%	877,168	(15,394)	861,774	2%	994,839	(16,920)	977,919
- մինչև 30 օր ժամկետանց	2%	105,604	(2,112)	103,492	2%	57,856	(1,157)	56,699
- 31-ից 120 օր ժամկետանց	2%	92,130	(1,843)	90,287	2%	63,001	(1,260)	61,741
- 121-ից 210 օր ժամկետանց	50%	45,785	(22,892)	22,893	50%	44,531	(22,266)	22,265
- 211-360 օր ժամկետանց	75%	44,372	(33,278)	11,094	75%	1,701	(1,275)	426
- ավելի քան 360 օր ժամկետանց	100%	25,286	(25,286)	-	100%	33,908	(33,908)	-
- վռանձին պահուստ	100%	-	-	-	100%	-	-	-
<b>Ընդամենը</b>		<b>1,190,345</b>	<b>(100,805)</b>	<b>1,089,540</b>		<b>1,195,836</b>	<b>(76,786)</b>	<b>1,119,050</b>

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է առևտրային դեբիտորական պարտքերի համար ձևավորված պարտքային կորստի պահուստի շարժը ըստ ակնկալվող պարտքային կորստի պարզեցված մոդելի, տարեկան ժամանակահատվածի սկզբից մինչև վերջ ընկած ժամանակահատվածի համար:

Հազ. ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
<b>Պարտքային կորստի պահուստ առ 1 հունվարի</b>	<b>76,786</b>	<b>63,781</b>
Նոր առաջացած	10,844	26,664
Հատկացում/(Վերականգնում) տարվա ընթացքում	13,175	(13,659)
<b>Պարտքային կորստի պահուստ առ 31 դեկտեմբերի</b>	<b>100,805</b>	<b>76,786</b>

**11 Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են առձեռն դրամական միջոցները, բանկերում պահվող ցպահանջ ավանդները և այլ կարճաժամկետ բարձր իրացվելիություն ունեցող ներդրումները՝ երեք ամիս կամ դրանից պակաս սկզբնական մարման ժամկետով: Դրամական միջոցները և դրամական միջոցների համարժեքները հաշվառվում են ԱՀ-ում, քանի որ. (i) դրանք պահվում են պայմանագրային դրամական միջոցների հոսքերի հավաքագրման նպատակով, և այդ դրամական միջոցների հոսքերն իրենցից ներկայացնում են միայն մայր գումարի և տոկոսագումարի վճարում, և (ii) դրանք չեն որոշված որպես իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող:

Հաճախորդներից դրամական միջոցների մուտքերը մատակարարներին վճարված դրամական միջոցները հաշվառվում են՝ համապատասխան ավելացված արժեքի հարկը ներառյալ:

Հազ. ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
Ցպահանջ բանկային մնացորդներ	9,637	235,361
<b>Ընդամենը դրամական միջոցներ և դրանց համարժեքներ</b>	<b>9,637</b>	<b>235,361</b>

**11. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (շարունակություն)**

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է դրամական միջոցների և դրանց համարժեքների մնացորդների վարկային որակը՝ ելնելով վարկային ռիսկի դասերից՝ 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

Հազ. ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
S&P Գլոբալ վարկանիշ B	9,637	235,361

**12 Կանոնադրական կապիտալ**

Սեփականատերերի կողմից վճարված բաժնետոմսերը դասակարգվում են որպես սեփական կապիտալ: Լրացուցիչ ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են նոր բաժնետոմսերի թողարկմանը, սեփական կապիտալում ցույց են տրվում որպես ստացված մուտքերից նվազեցում՝ հարկումից հետո:

2025թ. դեկտեմբերի 31-ին Ընկերության բաժնեմասերի ընդհանուր թիվը կազմել է 3,050,380 բաժնեմաս (2024թ.դեկտեմբերի 31-ին՝ 3,050,380 բաժնեմաս)՝ մեկ բաժնեմասի համար 500 ՀՀ դրամ (2024թ.դեկտեմբերի 31-ին՝ մեկ բաժնեմասի համար՝ 500 ՀՀ դրամ) անվանական արժեքով: Բոլոր բաժնետոմսերն ամբողջությամբ վճարված են: Յուրաքանչյուր սովորական բաժնետոմս տալիս է մեկ ձայնի իրավունք: Տարվա ընթացքում հայտարարված և վճարված շահաբաժինները հետևյալն են.

Հազ. ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
<b>Վճարման ենթակա շահաբաժիններ՝ առ 1 հունվարի</b>	-	-
Տարվա ընթացքում հայտարարված շահաբաժիններ	487,609	437,990
Տարվա ընթացքում վճարված շահաբաժիններ	(487,609)	(437,990)
<b>Դեկտեմբերի 31-ի դրությամբ վճարման ենթակա շահաբաժիններ</b>	-	-

Բոլոր շահաբաժինները հայտարարվել և վճարվել են ՀՀ դրամով: Հայտարարված շահաբաժինների գումարի մեջ ներառված է 24,381 հազ. ՀՀ դրամի չափով աղբյուրի մոտ վճարման ենթակա հարկը (2024թ. դեկտեմբերի 31-ին՝ 21,899 հազ. ՀՀ դրամ):

**13 Փոխառություններ**

Փոխառությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով՝ առանց կատարված գործարքի ծախսումների, և հետագայում հաշվառվում են ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը: Ընկերությունը 2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա ընթացքում ձեռք է բերել երկու վարկային գիծ: Բանկային վարկային գծերից մեկի սահմանաչափը 3,450,000 հազ. ՀՀ դրամ է, մարման ժամկետը՝ 2026թ. : Այն արտահայտված է հայկական դրամով: Տոկոսադրույքը կազմում է տարեկան 12% Սյուս վարկային գծի սահմանաչափը 400,000 հազ. ՀՀ դրամ է, մարման ժամկետը՝ 2026թ. , արտահայտված է ՀՀ դրամով, 12.5% տոկոսադրույքով: Փոխառությունների հաշվեկշռային արժեքը մոտ է դրանց իրական արժեքին:

**14 Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն**

Ստորև բերված աղյուսակը ներկայացնում է ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների և ֆինանսական գործունեությունից բխող՝ Ընկերության պարտավորությունների շարժի վերլուծությունը ներկայացված ժամանակաշրջաններից յուրաքանչյուրի համար: Սրանք այն պարտավորություններն են, որոնք դրամական միջոցների հոսքերի հաշվետվությունում ներկայացվում են որպես ֆինանսական պարտավորություններ:

**14. Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորությունների համեմատություն (շարունակություն)**

	31 դեկտեմբերի 2025թ. ավարտված տարի			31 դեկտեմբերի 2024թ. ավարտված տարի		
	Վարկեր և փոխառու- թյուններ	Վարձակա- լության գծով պարտավո- րություններ	Ընդամենը	Վարկեր և փոխառու- թյուններ	Վարձակա- լության գծով պարտավո- րություններ	Ընդամենը
<i>Հազ. ՀՀ դրամ</i>						
<b>Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 1 հունվարի</b>	<b>2,178,994</b>	<b>15,675</b>	<b>2,194,669</b>	<b>4,205,676</b>	<b>25,355</b>	<b>4,231,031</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր</b>						
Չուտ (մարումներ)/մուտքեր - դրամական հոսքեր	487,685	(14,751)	<b>472,934</b>	(2,023,448)	(11,447)	<b>(2,034,895)</b>
Տոկոսավճարներ	(410,421)	(117)	<b>(410,538)</b>	(452,498)	(1,022)	<b>(453,520)</b>
<b>Ոչ դրամական փոփոխություններ</b>						
Տոկոսային ծախս	406,736	1,746	<b>408,482</b>	449,264	2,789	<b>452,053</b>
Նոր վարձակալություններ	-	47,899	<b>47,899</b>	-	-	-
Այլ	-	(7,536)	<b>(7,536)</b>	-	-	-
<b>Ֆինանսական գործունեությունից բխող պարտավորություններ առ 31 դեկտեմբերի</b>	<b>2,662,994</b>	<b>42,916</b>	<b>2,705,910</b>	<b>2,178,994</b>	<b>15,675</b>	<b>2,194,669</b>

**15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր**

Առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, երբ գործընկերը կատարում է պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները: Հետագա չափումն իրականացվում է ամորտիզացված արժեքով՝ օգտագործելով արդյունավետ տոկոսադրույքի մեթոդը:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Առևտրային կրեդիտորական պարտքեր	557,972	323,784
Այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր	132,840	96,491
<b>Ընդամենը ֆինանսական կրեդիտորական պարտքեր առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի կազմում</b>	<b>690,812</b>	<b>420,275</b>
Աշխատակիցների հատուցումների գծով հաշվեգրված ծախսեր	136,617	198,939
Վճարման ենթակա հարկեր	315,873	209,033
Ստացված կանխավճարներ	114,453	92,484
Կուտակված և չօգտագործված արձակուրդ	83,548	78,038
Այլ կրեդիտորական պարտքեր	67,701	122,389
<b>Ընդամենը առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր</b>	<b>1,409,004</b>	<b>1,121,158</b>

**15 Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր (շարունակություն)**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ առևտրային կրեդիտորական պարտքերից 461,046 հազ. ՀՀ դրամ արտահայտված է ԱՄՆ դոլարով (31 դեկտեմբերի 2024թ.՝ 167,469 հազ. ՀՀ դրամ), 106,601 հազ. ՀՀ դրամ եվրոյով (31 դեկտեմբերի 2024թ. 129,758 հազ. ՀՀ դրամ), 201 հազ. ՀՀ դրամ ՌԴ ռուբլով (31 դեկտեմբերի 2024թ. գրո):

**16 Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ**

Հասույթը ճանաչվում է գեղչերից, վերադարձներից և ավելացված արժեքի հարկերից, արտահանման տուրքերից, ակցիզային հարկից և նմանատիպ այլ պարտադիր վճարներից զուտ: Ընդհանուր առմամբ, «Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ն դեբիտորական պարտքերը հատուցում է հաշիվ-ապրանքագրի ամսաթվից սկսած 60 օրվա ընթացքում կախված հաճախորդից:

**Ապրանքների վաճառքից հասույթ.** Ապրանքների վաճառքից հասույթը հիմնականում ներառում է սարքավորումների՝ (i) էքսկավատորներ, (ii) բեռնիչներ, (iii) ինքնաթափ բեռնատարներ, (iv) բուլդոզերներ, (v) ճանապարհային գլանամեքենաներ և այլն: Ապրանքների վաճառքից ստացված հասույթը ճանաչվում է որոշակի ժամանակային կետում:

**Պահեստամասերի վաճառքից հասույթ.** Պահեստամասերի վաճառքից ստացված հասույթը հիմնականում ներառում է էքսկավատորների, բեռնիչների, ինքնաթափ մեքենաների, բուլդոզերների, ճանապարհային գլանների և այլնի պահեստամասերի ուղղակի վաճառքը: Պահեստամասերի վաճառքից ստացված եկամուտը ճանաչվում է որոշակի ժամանակային կետում:

**Մատուցված ծառայություններից հասույթ.** Մատուցված ծառայություններից հասույթը ներառում է վերանորոգման և սպասարկման ծառայությունների մատուցումը, նախնական ախտորոշիչ ստուգումների ծառայությունները, ամսական ստուգումների ծառայությունները, Հայաստանում Մայր կազմակերպության արտադրանքի վաճառքի միջնորդավճարը: Մատուցված ծառայությունից հասույթը ճանաչվում է Ամփոփաթերթերի հիման վրա, որոնք մանրամասնում են կատարված փաստացի աշխատանքը:

Եթե Ընկերությունը որևէ լրացուցիչ ծառայություն է մատուցում հաճախորդին ապրանքների նկատմամբ վերահսկողության փոխանցումից հետո, ապա այդպիսի ծառայություններից ստացված հասույթը համարվում է առանձին կատարողական պարտավորություն և ճանաչվում է ծառայության մատուցման որոշակի ժամանակակային կետում: Ստանդարտ երաշխիքային պայմաններով անսարք ապրանքները վերանորոգելու կամ փոխարինելու գծով Ընկերության պարտավորությունը ճանաչվում է որպես պահուստ:

Ընկերությունը հաճախորդներից դրամական մուտքերը և մատակարարներին վճարումները դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունում ներկայացնում է ԱՄՆ-ն ներառյալ:

Հասույթը ամբողջությամբ ստացվում է հաճախորդների հետ պայմանագրերից և բաշխվում է հետևյալ կերպ.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Ապրանքների վաճառք - Որոշակի ժամանակային կետում	3,101,849	7,786,475
Պահեստամասերի վաճառք՝ որոշակի ժամանակային կետում	6,956,440	7,289,028
Ծառայությունների մատուցում՝ որոշակի ժամանակային կետում	1,739,990	1,506,328
<b>Ընդամենը հասույթ</b>	<b>11,798,279</b>	<b>16,581,831</b>

**«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ**

**Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ առ 31 դեկտեմբերի 2025թ.**

**16 Հաճախորդների հետ պայմանագրերի գծով հասույթ (շարունակություն)**

«Ցեպելին Արմենիա» ՍՊԸ-ն ստանում է հասույթ հետևյալ աշխարհագրական վայրերում ապրանքների և ծառայությունների վաճառքից.

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Տեղական վաճառք	3,068,546	7,666,160
Արտասահմանում	33,303	120,315
<b>Ընդամենը ապրանքների վաճառքից հասույթ</b>	<b>3,101,849</b>	<b>7,786,475</b>
Տեղական վաճառք	6,819,398	7,164,965
Արտասահմանում	137,042	124,063
<b>Ընդամենը պահեստամասերի վաճառքից հասույթ</b>	<b>6,956,440</b>	<b>7,289,028</b>
Տեղական վաճառք	1,388,150	1,053,104
Արտասահմանում	351,840	453,224
<b>Ընդամենը մատուցված ծառայությունից հասույթ</b>	<b>1,739,990</b>	<b>1,506,328</b>
<b>Ընդամենը հասույթ</b>	<b>11,798,279</b>	<b>16,581,831</b>

**17 Վաճառքի ինքնարժեք**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>Ծան.</b>	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Վաճառված ապրանքների արժեքը	9	8,082,231	12,710,267
Անձնակազմի գծով ծախսեր		930,445	820,655
Հիմնական միջոցների մաշվածություն	7	96,064	92,500
Սպառված պահեստամասեր		89,309	84,435
Ճամփորդական ծախսեր		37,081	28,161
Այլ		211,122	155,730
<b>Ընդամենը վաճառքի ինքնարժեք</b>		<b>9,446,252</b>	<b>13,891,748</b>

**18 Վաճառքի և բաշխման ծախսեր**

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>Ծան.</b>	<b>2025թ.</b>	<b>2024թ.</b>
Անձնակազմի գծով ծախսեր		717,868	758,336
Հիմնական միջոցների մաշվածություն	7	95,473	75,091
Գովազդային և շուկայավարման ծառայություններ		51,813	64,968
Վառելիքի ծախսեր		21,756	19,472
Վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ		19,485	15,856
Կարճաժամկետ վարձակալության հետ կապված ծախսեր		15,591	15,604
Ապահովագրական ծախսեր		14,898	15,096
Տրանսպորտային ծախսեր		9,639	7,863
Ճամփորդական ծախսեր		8,466	12,853
Այլ		76,235	96,712
<b>Ընդամենը վաճառքի և բաշխման ծախսեր</b>		<b>1,031,224</b>	<b>1,081,851</b>

**19 Ընդհանուր և վարչական ծախսեր**

Հազ. ՀՀ դրամ	Ծան	2025թ.	2024թ.
Անձնակազմի գծով ծախսեր		322,001	307,898
Հիմնական միջոցների մաշվածություն	7	49,023	52,567
Բանկային միջնորդավճարներ		41,156	77,940
Վերանորոգման և տեխնիկական սպասարկման ծառայություններ		30,466	19,247
Խորհրդատական և այլ մասնագիտական ծառայություններ		25,660	25,540
Կոմունալ ծախսեր		24,481	22,684
Վառելիքի ծախսեր		10,481	11,057
Ճամփորդական ծախսեր		8,568	13,193
Այլ		88,863	57,365
<b>Ընդամենը ընդհանուր և վարչական ծախսեր</b>		<b>600,699</b>	<b>587,491</b>

**20 Շահութահարկ**

Ֆինանսական հաշվետվություններում շահութահարկը ներկայացվում համաձայն օրենսդրության, որն, ըստ Էուլթյան, գործում է կամ ուժի մեջ է մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ:

**Անորոշ հարկային դիրքեր.** Ընկերության անորոշ հարկային դիրքերը վերազնահատվում են ղեկավարության կողմից յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի վերջում: Շահութահարկի գծով պարտավորությունները հաշվի են առնվում այն դեպքում, երբ ղեկավարությունը գտնում է, որ լրացուցիչ հարկային պարտավորությունների առաջացման հավանականությունը ավելի մեծ է, քան դրանց բացակայությունը, եթե Ընկերության հարկային գործունեությունը վիճարկվի հարկային մարմինների կողմից: Չնայած է այն հարկային օրենքների և համապատասխան իրավական ակտերի մեկնաբանությունների վրա, որոնք, ըստ Էուլթյան, գործում են կամ ուժի մեջ են մտել հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ, ինչպես նաև նմանատիպ հարցերի շուրջ ցանկացած հայտնի դատական կամ այլ որոշումների վրա: Տուգանքների, տույսների և հարկերի, բացառությամբ շահութահարկի, գծով պարտավորությունները ճանաչվում են ղեկավարության կողմից՝ հիմք ընդունելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ պարտավորությունների մարման համար պահանջվող ծախսերի լավագույն գնահատականը:

**Հետաձգված հարկային ակտիվի ճանաչում.** Ճանաչված հետաձգված հարկային ակտիվները ներկայացնում են շահութահարկի այն գումարը, որը կարող է հաշվանցվել ապագա հարկվող շահույթից նվազեցումների դիմաց և ճանաչվում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում: Հետաձգված հարկային ակտիվը ճանաչվում է միայն այն դեպքում, եթե կա համապատասխան հարկային արտոնության իրացման բարձր հավանականություն: Սա ենթադրում է ժամանակավոր տարբերությունների առկայություն, որոնք ապագայում ակնկալվում է վերականգնել, և բավարար ապագա հարկվող շահույթ, որոնք դիմաց ակնկալվում է օգտագործել նվազեցումները: Ապագա հավանական հարկվող շահույթի և հարկային արտոնությունների գումարը հիմնված են ղեկավարության ակնկալիքների վրա, որոնք համարվել են ողջամիտ տվյալ հանգամանքներում:

**Հարկային օրենսդրություն.** Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա է տարբեր մեկնաբանությունների, տես Ծանոթագրություն 21:

**(ա) Շահութահարկի գծով ծախսի կազմը**

Շահույթում կամ վնասում ճանաչված շահութահարկի գծով ծախսը ներառում է հետևյալ բաղադրիչները.

Հազ. ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
Ընթացիկ հարկ	79,774	120,154
Հետաձգված հարկ / (կրեդիտ)	33,933	(2,234)
<b>Տարվա շահութահարկի գծով ծախս</b>	<b>113,707</b>	<b>117,920</b>

**20 Ծահութահարկ (շարունակություն)**

**(բ) շահութահարկի գծով ծախսի համադրում շահույթի կամ վնասի հետ՝ բազմապատկած կիրառելի հարկային դրույքաչափով**

Ընկերության 2025թ. հարկվող շահույթի գծով կիրառելի շահութահարկի դրույքաչափը 18% է (2024թ.՝ 18%)։ Հարկերի գծով ծախսի ակնկալվող և իրական մեծությունների միջև համեմատագրումը ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	2025թ.	2024թ.
<b>Ծահույթ մինչև հարկումը</b>	<b>375,545</b>	<b>605,529</b>
Տեսական հարկային վճար՝ օրենքով սահմանված դրույքաչափով 18% (2024թ.՝ 18%).	(67,598)	(108,995)
Հարկային առումով չնվազեցվող կամ չհարկվող գործարքների ազդեցությունը.		
- Չհարկվող եկամուտ	17,328	35,569
- Չնվազեցվող ծախսեր	(48,120)	(44,494)
Նախորդ տարիների ընթացքում ընթացիկ հարկի գծով պակաս հաշվարկված պահուստ	(15,317)	-
<b>Տարվա շահութահարկի գծով ծախս</b>	<b>(113,707)</b>	<b>(117,920)</b>

**(գ) Հետաձգված հարկերի վերլուծությունն ըստ ժամանակավոր տարբերության տեսակի**

ՖՀՄՍ-ի և Հայաստանի Հանրապետության հարկային օրենսդրության միջև եղած տարբերություններն առաջացնում են ժամանակավոր տարբերություններ՝ ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նպատակով որոշվող ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքների և հարկման նպատակով որոշվող դրանց գումարների միջև։

Այդ ժամանակավոր տարբերություններում 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև.

Հազ. ՀՀ դրամ	1 հունվարի 2025թ.	Ծախսագրված/ (կրեդիտագրված) շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2025թ.
<b>Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը</b>			
Հիմնական միջոցներ	42,488	(24,953)	17,535
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(2,147)	1,665	(482)
Պաշարներ	97,240	3,527	100,767
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	13,822	4,328	18,150
Վարձակալության գծով պարտավորություն	2,822	(461)	2,361
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	65,940	(18,039)	47,901
<b>Չուտ հետաձգված հարկային ակտիվ</b>	<b>220,165</b>	<b>(33,933)</b>	<b>186,232</b>

Այդ ժամանակավոր տարբերություններում 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ շարժի հարկային հետևանքը մանրամասնորեն ներկայացված է ստորև.

**20 Ծահուկահարկ (շարունակություն)**

	1 հունվարի 2024թ.	Ծախսագրված/ (կրեդիտագրված) շահույթին կամ վնասին	31 դեկտեմբերի 2024թ.
<i>Հազ. ՀՀ դրամ</i>			
<b>Ժամանակավոր տարբերությունների հարկային հետևանքը</b>			
Հիմնական միջոցներ	50,061	(7,573)	42,488
Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ	(3,758)	1,611	(2,147)
Պաշարներ	99,647	(2,407)	97,240
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	11,481	2,341	13,822
Վարձակալության գծով պարտավորություն	4,564	(1,742)	2,822
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	55,936	10,004	65,940
<b>Չուտ հետաձգված հարկային ակտիվ</b>	<b>217,931</b>	<b>2,234</b>	<b>220,165</b>

**21 Պայմանական դեպքեր և պարտավորություններ**

**Իրավական գործընթացներ.** Ժամանակ առ ժամանակ բնականոն գործունեության ընթացքում Ընկերության դեմ կարող են ներկայացվել հայցեր: Իր գնահատականների, ինչպես նաև արտաքին մասնագիտական խորհրդատվության հիման վրա դեկլարությունը կարծում է, որ պահանջների գծով ոչ մի էական վնաս չի կարող կրել, որը կգերազանցի սույն ֆինանսական հաշվետվություններում նախատեսված պահուստները:

**Հարկային օրենսդրություն.** Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային օրենսդրությունը ենթակա է տարբեր մեկնաբանությունների և փոփոխությունների, որոնք կարող են հաճախակի տեղի ունենալ: Դեկլարության կողմից այդ օրենսդրության մեկնաբանումը՝ Ընկերության գործարքների և գործունեության հանդեպ կիրառման առումով կարող է վիճարկվել համապատասխան մարմինների կողմից: Հարկային մարմիններն օրենսդրության մեկնաբանման և հարկային ստուգումների ընթացքում կարող են կիրառել առավել խիստ և բարդ մոտեցում: Բյուջեի կատարմանն ուղղված հարկային մուտքերի ավելացման ջանքերի հետ համատեղ, վերոնշյալը կարող է հանգեցնել հարկային մարմինների կողմից իրականացվող ստուգումների հաճախականության ու խորության աճի: Մասնավորապես, հնարավոր է, որ անցյալում խնդրահարույց չհամարված գործարքներն ու գործունեությունը վիճարկվեն: Որպես հետևանք, կարող են առաջադրվել էական ծավալի լրացուցիչ հարկեր, տուգանքներ և տուկոսներ: Հարկային ստուգումները կարող են ներառել ստուգման ամսաթվին անմիջապես նախորդող երեք օրացուցային տարիները: Որոշակի հանգամանքների դեպքում ստուգումը կարող է ներառել ավելի երկար ժամանակահատվածներ:

Հայաստանի տրանսֆերային գնագոյացման (ՏԳ) օրենսդրությունը ընդհանուր առմամբ համահունչ է Տևտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (ՏՀԶԿ) կողմից մշակված ՏՏ միջազգային սկզբունքներին, թեև այն ունի որոշակի առանձնահատկություններ. ՏԳ-ի օրենսդրությունը նախատեսում է վերահսկվող գործարքների (կապակցված կողմերի միջև գործարքներ և չկապակցված կողմերի միջև որոշակի գործարքներ) լրացուցիչ հարկային ուսումնասիրության հնարավորություն, եթե այդպիսի գործարքները չեն իրականացվում պարզած ձեռքի սկզբունքով: Դեկլարությունն իրականացրել է ներքին հսկողության գործառույթներ՝ ՏԳ գործող օրենսդրությանը համապատասխանությունն ապահովելու տեսանկյունից:

Վերահսկվող գործարքներից առաջացող հարկային պարտավորությունները որոշվում են դրանց փաստացի գործարքների գների հիման վրա: Հնարավոր է, որ ՏԳ կանոնների մեկնաբանության զարգացումների ի հետ մեկտեղ, նման գները ենթակա լինեն վիճարկման: Կյոպիսի մարտահրավերների ազդեցությունը հնարավոր չէ արժանահավատորեն գնահատել այնուամենայնիվ, դա կարող է էական նշանակություն ունենալ Ընկերության ֆինանսական վիճակի և/կամ գործունեության համար:

**Կապիտալ ծախսումների գծով պարտավորություններ.** 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերությունը չունի պայմանագրային կապիտալ ծախսերի գծով պարտավորություններ:

## **22 Ֆինանսական ռիսկերի կառավարում**

Ընկերությունում ռիսկերի կառավարումն իրականացվում է ֆինանսական, գործառնական և իրավական ռիսկերի ուղղություններով: Ֆինանսական ռիսկը կազմված է շուկայական ռիսկից (ներառյալ՝ արժույթային, տոկոսադրույքի և այլ գնային ռիսկը), պարտքային ռիսկից և իրացվելիության ռիսկից: Ֆինանսական ռիսկերի կառավարման առաջնային գործառնություն է ռիսկերի սահմանաչափի սահմանումը, որից հետո ցանկացած տեսակի ռիսկերի ազդեցության պահպանումը այդ սահմանաչափում: Գործառնական և իրավական ռիսկերի կառավարման գործառնությունները նպատակ ունեն ապահովել ներքին քաղաքականության և ընթացակարգերի պատշաճ իրականացումը՝ գործառնական և իրավական ռիսկերը նվազագույնի հասցնելու համար:

**Պարտքային ռիսկ.** Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի, այսինքն՝ ռիսկ, երբ ֆինանսական գործիքի մի կողմը ֆինանսական վնաս է պատճառում մյուս կողմին՝ պարտավորությունները չկատարելու հետևանքով:

Պարտքային ռիսկի ենթարկվածությունը առաջանում է առևտրային դեբիտորական պարտքերից, պայմանագրային ակտիվներից, դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, ինչպես նաև Ընկերության փոխառությունների և այլ գործարքների արդյունքում, որոնք առաջ են բերում ֆինանսական ակտիվներ և հետհաշվեկշռային վարկային պարտավորություններ:

Ընկերության առավելագույն ենթարկվածությունը պարտքային ռիսկի արտացոլվում է ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ֆինանսական ակտիվների հաշվեկշռային արժեքներում:

**Պարտքային ռիսկի կառավարում.** Պարտքային ռիսկը Ընկերության գործունեության համար հանդիսանում է ամենամեծ ռիսկը, ուստի ղեկավարությունն ուշադիր վերահսկում է իր պարտքային ռիսկի ենթարկվածությունը:

Ռիսկերի կառավարման նպատակով պարտքային ռիսկի գնահատումը բարդ է և ենթադրում է մոդելների կիրառում, քանի որ ռիսկը փոփոխվում է՝ կախված շուկայական պայմաններից, ակնկալվող դրամական հոսքերից և ժամանակի ընթացքից: Ակտիվների պորտֆելի գծով պարտքային ռիսկի գնահատումը ենթադրում է դեֆոլտի առաջացման հավանականության գնահատում, կորուստների համապատասխան գործակիցների և գործընկերների միջև դեֆոլտի հարաբերակցության հետագա գնահատում:

**Սահմանաչափեր.** Ընկերությունը կառավարում է իր պարտքային ռիսկի մակարդակը՝ սահմանաչափեր կիրառելով մեկ գործընկերոջ կամ գործընկերների խմբի գծով ստանձնած ռիսկերի ծավալի համար: Պարտքային ռիսկի սահմանափակումները պարբերաբար հաստատվում են ղեկավարության կողմից: Այդ ռիսկերն անընդհատ վերահսկվում են և ենթակա են տարեկան կամ առավել հաճախակի վերանայման:

Ընկերության ղեկավարությունը դիտարկում է չվճարված առևտրային դեբիտորական պարտքերի վերլուծությունն ըստ ժամկետայնության և միջոցներ է ձեռնարկում ժամկետանց մնացորդների մասով: Հետևաբար, ղեկավարությունը տեղին է համարում տրամադրել պարտքային ռիսկի ժամկետայնության վերաբերյալ և այլ տեղեկատվություն, ինչպես բացահայտված է Ծանոթագրություն 10-ում:

**Անկալվող պարտքային կորուստների (ԱՊԿ) չափում** ԱՊԿ-ն իրենից ներկայացնում է դրամական միջոցների ապագա դեֆիցիտի ներկա արժեքի հավանականությունը կշռված գնահատական (այսինքն՝ միջին կշռված պարտքային կարուստը, տրված ժամանակահատվածում տեղի ունեցող դեֆոլտի համապատասխան ռիսկերով, որոնք օգտագործվել են որպես կշիռ): ԱՊԿ չափումն անկողմնակալ է և որոշվում է հնարավոր արդյունքների շրջանակը գնահատելու միջոցով: ԱՊԿ չափումն իրականացվում է Ընկերության կողմից օգտագործվող հետևյալ չորս բաղադրիչների հիման վրա. դեֆոլտի հավանականություն, դեֆոլտի ռիսկին ենթակա պարտքային պահանջի մեծություն, դեֆոլտից առաջացող վնաս և գեոլոգիան տոկոսադրույք:

**Պարտքային ռիսկի կենտրոնացում.** Ընկերությունը ենթարկվում է պարտքային ռիսկի կենտրոնացման:

2025թ. դեկտեմբերի 31-ին Ընկերությունն ուներ երեք գործընկեր (2024թ.՝ չորս գործընկեր), որոնց դեբիտորական պարտքերի ընդհանուր մնացորդները գերազանցում էին 100,000 հազ. ՀՀ դրամը: Մնացորդի ընդհանուր գումարը կազմում է 829,174 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 876,328 հազ. ՀՀ դրամ) կամ առևտրային և այլ ֆինանսական դեբիտորական պարտքերի համախառն գումարի 70%-ը (2024թ.՝ 70%):

**22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)**

**Շուկայական ռիսկ** . Ընկերությունը ենթարկվում է շուկայական ռիսկերի: Շուկայական ռիսկերն առաջանում են. (ա) արտարժույթի, (բ) տոկոսային ակտիվների և պարտավորությունների և (գ) բաժնային արժեթղթերի բաց դիրքերից, որոնք բոլորն էլ ենթարկվում են ընդհանուր և առանձնահատուկ շուկայական շարժերի: Ղեկավարությունը սահմանում է ռիսկի այն մակարդակը, որը կարող է ընդունվել, ինչն էլ վերահսկվում է օրական կտրվածքով: Այնուհանդերձ, այս մոտեցման կիրառումը չի կանխում այս սահմանաչափերից դուրս վնասների առաջացումն այն դեպքերում, երբ տեղի են ունենում ավելի նշանակալի շուկայական շարժեր: Ստորև ներկայացված շուկայական ռիսկերի նկատմամբ զգայունությունը որոշվել է հիմք ընդունելով մեկ գործոնի փոփոխությունը՝ անփոփոխ պահելով մնացած այլ գործոնները: Գործնականում այս իրավիճակի տեղի ունենալը հավանական չէ, և մի շարք գործոններում փոփոխությունները կարող են փոխկապակցված լինել, օրինակ՝ տոկոսադրույթի և արտարժույթի դրույքաչափի փոփոխությունները:

**Արժուրթային ռիսկ**. Արտարժուրթային ռիսկի առնչությամբ ղեկավարությունը սահմանում է ռիսկի ազդեցության մակարդակի սահմանափակումներ՝ ըստ արժույթի և ընդհանուր առմամբ: Դիրքերը վերահսկվում են ամսական: Ստորև բերված աղյուսակը ամփոփում է հաշվետու ժամանակաշրջանի վերջում Ընկերության՝ արտարժույթի փոխարժեքի ռիսկի ենթարկվածությունը:

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2025թ.			31 դեկտեմբերի 2024թ.		
	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական պարտավորություններ	Չուտ հաշվեկշռային դիրք	Դրամական ֆինանսական ակտիվներ	Դրամական պարտավորություններ	Չուտ հաշվեկշռային դիրք
ԱՄՆ դոլար	107,459	461,046	(353,587)	277,242	(167,469)	109,773
Եվրո	-	106,601	(106,601)	-	(129,757)	(129,757)
ՌԴ ռուբլի	-	201	(201)	-	-	-
<b>Ընդամենը</b>	<b>107,459</b>	<b>567,848</b>	<b>(460,389)</b>	<b>277,242</b>	<b>(297,226)</b>	<b>(19,984)</b>

Վերոնշյալ վերլուծությունը ներառում է միայն դրամական ակտիվները և պարտավորությունները:

Հետևյալ աղյուսակը ներկայացնում է շահույթի կամ վնասի զգայունությունը հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ կիրառվող փոխարժեքի հնարավոր փոփոխությունների նկատմամբ՝ Ընկերության ֆունկցիոնալ արժույթի հետ հարաբերակցությամբ, բոլոր այլ փոփոխականները հաստատուն պահելով:

Հազ. ՀՀ դրամ	31 դեկտեմբերի 2025թ.	31 դեկտեմբերի 2024թ.
<i>Ազդեցությունը շահույթի կամ վնասի վրա</i>		
ԱՄՆ դոլարի արժևորում 20%-ով (2024թ.՝ արժևորում 20%-ով)	(70,717)	27,443
ԱՄՆ դոլարի արժեզրկում 20%-ով (2024թ.՝ արժեզրկում 20%-ով)	70,717	(27,443)
Եվրոյի արժևորում 20%-ով (2024թ.՝ արժևորում 20%-ով)	(21,320)	32,439
Եվրոյի արժեզրկում 20%-ով (2024թ.՝ արժեզրկում 20%-ով)	21,320	(32,439)
Ռուսական ռուբլու արժևորում 20%-ով (2024թ.՝ արժևորում 20%-ով)	(40)	-
Ռուսական ռուբլու արժեզրկում 20%-ով (2024թ.՝ արժեզրկում 20%-ով)	40	-

Ընկերությունը չունի պաշտոնական քաղաքականություն և ընթացակարգեր տոկոսադրույթների ռիսկերի կառավարման համար, քանի որ ղեկավարությունն այդ ռիսկը համարում է աննշան Ընկերության բիզնեսի համար:

Ընկերությունը վերահսկում է տոկոսադրույթները իր ֆինանսական գործիքների գծով: Ստորև ներկայացված աղյուսակում ամփոփված են արդյունավետ տոկոսադրույթները 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ հիմնվելով առանցքային ղեկավար անձնակազմի կողմից ուսումնասիրված հաշվետվությունների վրա:

**22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)**

Տարեկան % արտահայտությամբ	2025թ.	2024թ.
<b>Պարտավորություններ</b>		
Փոխառություններ՝ արտահայտված ՀՀ դրամով	12-12.5	11-13

**Այլ գնային ռիսկ:** Ընկերությունը չի ենթարկվում սեփական կապիտալի գծով գնային ռիսկի:

**Իրացվելիության ռիսկ.** Իրացվելիության ռիսկ՝ նշանակում է, որ կազմակերպությունը կարող է դժվարանալ կատարելու պարտականությունները ֆինանսական պարտավորությունների գծով: Ընկերությունը օրական կտրվածքով առնչվում է դրամական միջոցների պահանջների: Իրացվելիության ռիսկը կառավարվում է Ընկերության ղեկավարության կողմից: Ղեկավարությունը վերահսկում է Ընկերության դրամական հոսքերի ամսական շարժի կանխատեսումները:

Ընկերությունը աշխատում է պահպանել կայուն ֆինանսավորման աղբյուրներ, որոնք հիմնականում բաղկացած են առևտրային և այլ կրեդիտորական պարտքերից: Ընկերությունը ֆինանսական միջոցների ներդրումներ է կատարում իրացվելի ակտիվների դիվերսիֆիկացված փաթեթում, որպեսզի կարողանա արագորեն և անմիջականորեն բավարարել չնախատեսված իրացվելիության պահանջները: Ընկերության իրացվելիության պորտֆելը բաղկացած է դրամական միջոցներից և դրանց համարժեքներից, տե՛ս ծանոթագրություն 11 Ըստ ղեկավարության գնահատման՝ իրացվելիության փաթեթի դրամական միջոցները և բանկային ավանդները կարող են մեկ օրվա ընթացքում վերածվել կանխիկի՝ իրացվելիության անկանխատեսելի պահանջը բավարարելու համար:

Ղեկավարությունը վերահսկում է իրացվելիության դիրքը և պարբերաբար իրականացնում է իրացվելիության սթրես-թեստ՝ օգտագործելով ինչպես բնականոն, այնպես էլ առավել խիստ շուկայական պայմաններ ներառող սցենարներ:

Ստորև ներկայացված է պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ. ժամկետայնության աղյուսակում բացահայտված գումարներն իրենցից ներկայացնում են պայմանագրային չգեղչված դրամական միջոցների հոսքեր, ներառյալ համախառն վարձակալական պարտավորությունները, համախառն վարկային պարտավորությունները և տոկոսների վճարումները: Այն դեպքերում, երբ վճարվող գումարը ֆիքսված չէ, աղյուսակում նշված արժեքը որոշվում է՝ ելնելով հաշվետու ամսաթվի դրությամբ առկա պայմաններից: Արտարժույթով վճարները փոխարկվում են՝ օգտագործելով հաշվետու ժամանակաշրջանի վերջի դրությամբ սփոթ փոխարժեքը:

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է

Հազ. ՀՀ դրամ	Մինչև 3 ամիս	3-ից 12 ամիս	12 ամիս - 5 տարի	Ընդամենը
<b>Պարտավորություններ</b>				
Փոխառություններ (Ծանոթագրություն 13)	875	2,662,119	-	2,662,994
Վարձակալության գծով պարտավորություններ (Ծանոթագրություն 8)	3,578	16,788	41,615	61,981
Առևտրային կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 15)	557,972	-	-	557,972
Այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 15)	132,840	-	-	132,840
<b>Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ</b>	<b>695,265</b>	<b>2,678,907</b>	<b>41,615</b>	<b>3,415,787</b>

**22 Ֆինանսական ռիսկերի կառավարում (շարունակություն)**

Ֆինանսական պարտավորությունների ժամկետայնության վերլուծությունը 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ հետևյալն է

Հազ. ՀՀ դրամ	Մինչև 3 ամիս	3-ից 12 ամիս	12 ամիս - 5 տարի	Ընդամենը
<b>Պարտավորություններ</b>				
Փոխառություններ (Ծանոթագրություն 13)	4,560	2,174,434	-	2,178,994
Վարձակալության գծով պարտավորություններ (Ծանոթագրություն 10)	-	7,547	8,128	15,675
Առևտրային կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 15)	323,784	-	-	323,784
Այլ ֆինանսական կրեդիտորական պարտքեր (Ծանոթագրություն 15)	96,491	-	-	96,491
<b>Ընդամենը ապագա վճարներ, ներառյալ ապագա մայր գումարի և տոկոսագումարների վճարներ</b>	<b>424,835</b>	<b>2,181,981</b>	<b>8,128</b>	<b>2,614,944</b>

**23 Կապիտալի կառավարում**

Կապիտալի կառավարման առումով Ընկերության խնդիրն է՝ ապահովել Ընկերության անընդհատության հիմունքով գործելու կարողությունը, միևնույն ժամանակ բաժնետերերի համար ապահովել եկամտաբերության ընդունելի մակարդակ, հաշվի առնելով այլ գործընկերների շահերը և պահպանելով կապիտալի գծով ծախսերը նվազագույնի հասցնելու համար օպտիմալ կապիտալի կառուցվածք: Կապիտալ կառուցվածքը պահպանելու և կարգավորելու համար Ընկերությունը կարող է ճշգրտել բաժնետերերին վճարվելիք շահաբաժինների չափերը, բաժնետերերին վերադարձվող կապիտալը, ինչպես նաև թողարկել նոր բաժնետոմսեր կամ վաճառել ակտիվները՝ պարտքը նվազեցնելու նպատակով: 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ Ընկերության կողմից տնօրինվող կապիտալի չափը կազմել է 1,787,028 հազ. ՀՀ դրամ (2024թ.՝ 2,012,799 հազ. ՀՀ դրամ):

**24 Ֆինանսական գործիքների իրական արժեքը**

Իրական արժեքն այն գումարն է, որով ֆինանսական գործիքը կարող է փոխանակվել պատրաստակամ կողմերի միջև ընթացիկ գործարքում, բացառությամբ հարկադիր վաճառքի կամ լուծարման, և որի լավագույնս վկայություն է հանդիսանում ակտիվ շուկայում գնանշված գինը:

Ֆինանսական գործիքների գնահատված իրական արժեքները որոշվել են Ընկերության կողմից՝ օգտագործելով առկա շուկայական տեղեկատվությունը, եթե այդպիսիք առկա են, և կիրառելով համապատասխան գնահատման մեթոդաբանություններ: Այնուամենայնիվ, գնահատված իրական արժեքը որոշելու համար շուկայական տվյալները մեկնաբանելու համար անհրաժեշտ է դատողության կիրառում: Հայաստանի Հանրապետությունը շարունակում է դրսևորել զարգացող շուկային բնորոշ որոշակի հատկություններ, և տնտեսական պայմանները շարունակում են սահմանափակել ֆինանսական շուկաների ակտիվության ծավալը: Շուկայական գնանշումները կարող են հնացած լինել կամ արտացոլել սթրեսային պայմաններում վաճառքի գործարքները և, հետևաբար, չներկայացնել ֆինանսական գործիքների իրական արժեքները: Ֆինանսական գործիքների իրական արժեքը գնահատելիս Դեկավարությունն օգտագործել է շուկայական որչ հասանելի տեղեկատվությունը:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական գործիքների իրական արժեքները Էականորեն չեն տարբերվում դրանց հաշվեկշռային արժեքներից:

**Ամորտիզացված արժեքով հաշվառվող ակտիվներ.** Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը հիմնված է գնահատված ապագա դրամական հոսքերի վրա, որոնք ակնկալվում է, որ կստացվեն ընթացիկ տոկոսադրույքներով համանման վարկային ռիսկեր ունեցող և մնացորդային մարման ժամկետներով նոր գործիքների դեպքում:

**Ամորտիզացված արժեքով հաշվառվող պարտավորություններ:** Ֆիքսված տոկոսադրույքով գործիքների գնահատված իրական արժեքը չափվում է հիմնվելով ակնկալվող դրամական միջոցների հոսքերի վրա՝ զեղչված համանման վարկային ռիսկ և մարման մնացորդային ժամկետ ունեցող նոր գործիքների համար գործող ընթացիկ տոկոսադրույքներով:

**25 Ֆինանսական գործիքների ներկայացում ըստ չափման կատեգորիաների**

Ընկերությունը, ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ» համաձայն, դասակարգում է ֆինանսական ակտիվները հետևյալ կատեգորիաների. (ա) իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, (բ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող պարտքային գործիքներ, (գ) այլ համապարփակ ֆինանսական արդյունքի միջոցով չափվող բաժնային գործիքներ և (դ) ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվներ: Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներն ունեն երկու ենթակատեգորիա. (i), պարտադիր կերպով իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ակտիվներ և (ii) ակտիվներ, որոնք սահմանվել են որպես այդպիսիք սկզբնական ճանաչման ժամանակ:

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների համադրումը վերը նշված չափման կատեգորիաներով 2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>31 դեկտեմբերի 2025թ. Ամորտիզացված արժեքով</b>
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>	
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 11)</b>	
- Ցպահանջ բանկային մնացորդներ	9,637
<b>Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 10)</b>	
- Առևտրային դեբիտորական պարտքեր, գուտ	1,089,540
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>1,099,177</b>

Հետևյալ աղյուսակում ներկայացված է ֆինանսական ակտիվների համադրումը վերը նշված չափման կատեգորիաներով 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

<i>Հազ. ՀՀ դրամ</i>	<b>31 դեկտեմբերի 2024թ. Ամորտիզացված արժեքով</b>
<b>ԱԿՏԻՎՆԵՐ</b>	
<b>Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ (Ծանոթագրություն 11)</b>	
- Ցպահանջ բանկային մնացորդներ	235,361
<b>Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 10)</b>	
- Առևտրային դեբիտորական պարտքեր, գուտ	1,119,050
<b>Ընդամենը ֆինանսական ակտիվներ</b>	<b>1,354,411</b>

Ընկերության բոլոր ֆինանսական պարտավորությունները հաշվառվում են ամորտիզացված արժեքով 2025թ. և 2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ:

**26 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ**

**Փոխկապակցված կողմերի հետ գործարքների սկզբնական ճանաչում:** Գործունեության բնականոն ընթացքում Ընկերությունը իրականացնում է փոխկապակցված կողմերի հետ գործարքներ: ՖՀՄՍ 9-ը պահանջում է ֆինանսական գործիքների սկզբնական ճանաչում՝ հիմնված նրանց իրական արժեքի վրա: Գործարքների համար ակտիվ շուկայի բացակայության դեպքում օգտագործվում է մասնագիտական դատողություն՝ որոշելու, թե արդյոք գործարքները կատարվել են շուկայական կամ ոչ շուկայական տոկոսադրույքներով: Դատողության համար հիմք է հանդիսանում չկապակցված կողմերի հետ նմանատիպ գործարքների գնահատումը և արդյունավետ տոկոսադրույքով վերլուծությունները:

**26 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)**

2025թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

<i>Չազ. ՉՉ դրամ</i>	<b>Անմիջական մայր ընկերություն</b>	<b>Համատեղ վերահսկվող ընկերություններ</b>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	107,458	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	297,271	-

2025թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար կապակցված կողմերի հետ գործարքները հետևյալն էին.

<i>Չազ. ՉՉ դրամ</i>	<b>Անմիջական մայր ընկերություն</b>	<b>Համատեղ վերահսկվող ընկերություններ</b>
Ապրանքների ձեռքբերում	7,710,140	9,211
Ապրանքների վաճառք	519,540	-
Շահաբաժինների վճարում, առանց հարկերի	463,228	-
Ստացված ծառայություններ	46,091	322

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի հետ մնացորդները հետևյալն են.

<i>Չազ. ՉՉ դրամ</i>	<b>Անմիջական մայր ընկերություն</b>	<b>Համատեղ վերահսկվող ընկերություններ</b>
Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր	148,861	-
Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր	216,170	24,251

2024թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ փոխկապակցված կողմերի գծով մնացորդները հետևյալն են.

<i>Չազ. ՉՉ դրամ</i>	<b>Անմիջական մայր ընկերություն</b>	<b>Համատեղ վերահսկվող ընկերություններ</b>
Ապրանքների ձեռքբերում	10,305,250	120,615
Ապրանքների վաճառք	682,194	72,844
Շահաբաժինների վճարում, առանց հարկերի	416,091	-
Ստացված ծառայություններ	23	47,643

Առանցքային ղեկավար անձնակազմի հատուցումները ներկայացված են ստորև. Առանցքային ղեկավար անձնակազմը ներառում է գլխավոր տնօրենին, ֆինանսական տնօրենին, մասնաճյուղերի տնօրեններին և առաջնային ապրանքների վաճառքի գծով տնօրենին:

<i>Չազ. ՉՉ դրամ</i>	<b>2025թ.</b>		<b>2024թ.</b>	
	<b>Ծախս</b>	<b>Հաշվեգրված պարտավորություն</b>	<b>Ծախս</b>	<b>Հաշվեգրված պարտավորություն</b>
<i>Կարճաժամկետ հատուցումներ.</i>				
- Աշխատավարձ	116,232	1,161	113,221	1,103
- Կարճաժամկետ պարգևավճարներ	95,144	39,200	88,255	53,872
<b>Ընդամենը</b>	<b>211,376</b>	<b>40,361</b>	<b>201,476</b>	<b>54,975</b>

**26 Փոխկապակցված կողմերի հետ մնացորդներ և գործարքներ (շարունակություն)**

Կարճաժամկետ պարզևավճարներ ամբողջությամբ դառնում են վճարման ենթակա տասներկու ամսվա ընթացքում՝ այն ժամանակաշրջանի ավարտից հետո, երբ ղեկավարությունը մատուցել է համապատասխան ծառայությունները:

**27 Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցող դեպքեր**

Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի չեն ունեցել այնպիսի դեպքեր, որոնք կարող էին հանգեցնել Շնկերության ֆինանսական հաշվետվություններում լրացուցիչ բացահայտման: